ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

«Medi-Cal»-ի հոգեբուժական ծառայությունների

Շտապ օգնություն պահանջող իրավիճակներում խնդրում ենք զանգահարել 9-1-1 կամ հիվանդին տանել մոտակա հիվանդանոցի շտապ օգնության սենյակ:

Եթե Ձեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր՝ որոշելու համար, թե արդյո՞ք տվյալ վիճակը շտապ օգնություն պահանջող վիճակ է, խնդրում ենք կարդալ այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի 8-րդ էջը:

Ինչպես ստանալ սպասարկողների ցուցակը

Դուք կարող եք խնդրել Ձեր Հոգեբուժական ծրագրից (ՀՕ), և նրանք պարտավոր են Ձեզ տալ այն անձանց, կլինիկաների և հիվանդանոցների ցուցակը, որոնց մոտ կամ որտեղ Դուք կարող եք հոգեբուժական ծառայություններ ստանալ Ձեր տարածքում: Այդ ցուցակը կոչվում է «սպասարկողների ցուցակ»: Դրանում պարունակվում են այն բժիշկների, հոգեբույժների, հիվանդանոցների և այլ վայրերի անունները, հեռախոսի համարները և հասցեները, որտեղ կամ որոնց մոտ Դուք կարող եք օգնություն ստանալ: Հնարավոր է, որ նախքան նրանց ծառայություններին դիմելը, Ձեզ հարկավոր լինի դիմել Ձեր ՀՕ-ին: Ձանգահարեք Ձեր ՀՕ-ի վերը նշված անվճար շուրջօրյա հեռախոսահամարով՝ սպասարկողների ցուցակ ստանալու և տեղեկանալու համար, թե արդյո՞ք անհրաժեշտ է որևէ սպասարկողի, կլինիկա կամ հիվանդանոց այցելելուց առաջ դիմել Ձեր ՀՕ-ին:

Disponible en Español

Ուրիշ ի՞նչ լեզուներով և տեսքով գոյություն ունեն այս նյութերը

Este folleto (o información) esta disponible en Español. Usted puede solicitarlo llamando al número de teléfono gratuito mencionado anteriormente.

Có bản tiếng Việt của tập sách (hoặc tài liệu) này. Quý vị có thể gọi số điện thoại miễn phí ở trên để xin bản tiếng Việt.

本小冊子（或資訊）有繁體中文版，
請致電以上免費專線查詢。

Phau ntawv no (los sis cov lus no) muaj ua lus Hmoob. Koj nug tau cov no uas hu tus xov tooj hu dawb saum toj no.

يتوفر هذا الكتيب(او هذه المعلومات) باللغة العربية. و يمكنك طلب نسخة بواسطة الإتصال برقم الهاتف المجاني المبين أعلاه.

Դուք կարող եք ստանալ այս գրքույկը (կամ տեղեկությունը) հայերեն լեզվով՝ զանգահարելով վերը նշված անվճար հեռախոսահամարով:

ក្នុងសៀវភៅ(រពត៌មាន)នេះ អាចមានជាភាសាខ្មែរ។
អ្នកអាចសុំវាដោយគ្រាន់តែ ទូរស័ព្ទទៅកាន់លេខដែលឥតគិតថ្លៃ
ដូចបានរាយខាងលើ។

Данная брошюра также доступна на русском языке. Вы можете попросить предоставить ее вам, позвонив по бесплатному номеру телефона, указанному выше.

TAng buklet (o impormasyon) ay makukuha sa Tagalog. Maaari mo itong hilingin sa pamamagitan ng pagtawag sa walang bayad na telepono na nakalista sa itaas.

این دفترچه (یا اطلاعات) بزبان فارسی موجود است.
شما میتوانید از طریق شماره تلفن رایگان درج شده در
فوق آنرا درخواست کنید.

본 책자(또는 정보)는 한국어로 이용이 가능하며,
위에 수록된 무료전화번호로 연락하여 요청하실 수
있습니다.

Ներածություն «Medi-Cal»-ի Հոգեբուժական ծառայությունների

Ինչու՞ եմ ես ստացել այս գրքույկը և ինչու՞ է այն կարևոր

Ձեզ տրվել է այս գրքույկը, քանի որ Դուք իրավասու եք «Medi-Cal» ստանալու և պետք է իմանաք Լոս Անջելեսի շրջանի կողմից առաջարկվող հոգեբուժական ծառայությունների մասին, և թե ինչպես կարող եք ստանալ այդ ծառայությունները՝ անհրաժեշտության դեպքում:

Եթե Դուք ծառայություններ եք ստանում Լոս Անջելեսի շրջանից, ապա այս գրքույկը պարզապես լրացուցիչ տեղեկություններ է պարունակում այն մասին, թե ինչպես են այդ ծառայությունները մատուցվում: Այն ծանոթացնում է Ձեզ հոգեբուժական ծառայություններին, սակայն փոփոխություն չի մտցնում Ձեր ստացած ծառայությունների մեջ: Կարող եք պահել այս գրքույկը՝ հետագայում նորից կարդալու համար:

Եթե Դուք դժվարանում եք հասկանալ այս գրքույկում գրվածը, խնդրում ենք զանգահարել ՀՕ՝ (800) 854-7771 հեռախոսահամարով և հարցնել թե ուրիշ ինչ եղանակով Դուք կարող եք ստանալ այս կարևոր տեղեկությունները

Եթե այս պահին Դուք ծառայություններ չեք ստանում, կարող եք պահել գրքույկն այն դեպքերի համար, երբ հետագայում Ձեզ կամ որևէ մեկին կարող են տեղեկություններ անհրաժեշտ լինել հոգեբուժական ծառայությունների մասին:

Ի՞նչ է շտապ հոգեբուժական օգնություն պահանջող վիճակը

Շտապ օգնություն պահանջող վիճակը լուրջ հոգեկան կամ զգացական բնույթի խնդիր է, օրինակ՝ երբ որևէ մեկը վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար՝ հավանական հոգեկան հիվանդության պատճառով կամ
երբ որևէ մեկն անկարող է ուտել, հագնվել կամ տանը մնալ՝ հավանական հոգեկան հիվանդության պատճառով:

Շտապ օգնություն պահանջող իրավիճակներում խնդրում ենք զանգահարել 9-1-1 կամ հիվանդին տանել հիվանդանոցի շտապ օգնության սենյակ:

Ինչպե՞ս օգտվել այս գրքույկից

Այս գրքույկը կօգնի Ձեզ հասկանալ, թե ինչ են մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները, ովքեր կարող են օգտվել դրանցից և ինչպես կարող եք Դուք օգնություն ստանալ Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծրագրով (ՀՕ):

Այս գրքույկը բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում բացատրվում է, թե ինչպես կարելի է օգնություն ստանալ Լոս Անջելեսի շրջանի ՀՕ-ից և ինչ կերպ է այդ օգնությունը տրամադրվում:

Երկրորդ բաժինը ներկայացված է Կալիֆոռնիայի նահանգի կողմից և առավել ընդհանուր տեղեկություններ է պարունակում մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների մասին: Այն բացատրում է, թե ինչպես այլ ծառայություններ ստանալ, ինչպես լուծել այդ առումով ծագող տարբեր խնդիրները և ինչ իրավունքներ ունեք Դուք՝ այդ ծրագրի համաձայն:

Այս գրքույկում բացատրվում է նաև, թե ինչպես կարելի է տեղեկություններ ստանալ այն բժիշկների, կլինիկաների և հիվանդանոցների մասին, որոնց միջոցով Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն ծառայություններ է տրամադրում և որտեղ կարելի է գտնել նրանց:

Ի՞նչ է շրջանային հոգեբուժական ծրագիրը (ՀԾ)

Հոգեբուժական ծառայությունները տրամադրվում են «Medi-Cal»-ի անդամներին, այդ թվում՝ Լոս Անջելեսի շրջանում բնակվող երեխաներին, երիտասարդներին, չափահասներին և տարեցներին:

Որոշ դեպքերում այդ ծառայությունները կարող է տրամադրել Ձեր սովորական բժիշկը: Այլ ծառայությունները տրամադրվում են հատուկ մասնագետների կողմից և կոչվում են «մասնագիտացված» հոգեբուժական ծառայություններ: Այդ մասնագիտացված ծառայությունները տրամադրվում են Լոս Անջելեսի շրջանում «Հոգեբուժական ծրագրով» կամ ՀԾ-ով, որը նույնը չէ, ինչ Ձեր սովորական բժիշկը: Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն գործում է Կալիֆոռնիայի նահանգի և դաշնային իշխանությունների կողմից սահմանված օրենքներով: Կալիֆոռնիա նահանգի յուրաքանչյուր շրջան ունի իր առանձին ՀԾ-ն:

> Եթե Դուք զգում եք, որ հոգեբուժական բնույթի խնդիր ունեք, կարող եք ուղղակիորեն զանգահարել Լոս Անջելեսի շրջանի ՀԾ՝ (800) 854-7771 հեռախոսահամարով: Սա անվճար հեռախոսահամար է, որը գործում է շուրջօրյա և շաբաթը յոթ օր: Ձեր իրավունքների, արտոնությունների և բուժման տարբերակների մասին բանավոր և գրավոր թարգմանությունները Դուք կարող եք ստանալ Ձեր նախընտրած լեզվով: Զանգահարելու համար չի պահանջվում նախապես Ձեր բժշկի թույլտվությունը կամ հոգեբույժին այցելելու ուղեգիր ստանալ:

Եթե Դուք կարծում եք, որ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները կարող են օգտակար լինել Ձեզ և իրավասու եք «Medi-Cal» ստանալու, ապա Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն կօգնի Ձեզ պարզել, թե արդյո՞ք Դուք կարող եք հոգեբուժական ծառայություններ և բուժումներ ստանալ: Եթե Ձեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր որոշակի ծառայությունների վերաբերյալ, խնդրում ենք կարդալ այս գրքույկի «Ծառայությունները» բաժինը՝ Կալիֆոռնիայի նահանգին նվիրված մասի 11-րդ էջում:

Ի՞նչ անել, եթե դժվարություններ լինեն օգնություն ստանալու հետ կապված

Եթե Դուք օգնություն ստանալու հետ կապված որևէ դժվարություն ունեք, խնդրում ենք զանգահարել Լոս Անջելեսի շրջանի ՀՇ-ի շուրջօրյա հեռախոսահամարով, որն է՝ (800) 854-7771: Կարող եք նաև զանգահարել Ձեր շրջանի Հիվանդի իրավունքների պաշտպան պաշտոնյային՝ (800) 700-9996 հեռախոսահամարով:

Եթե դա չօգնի լուծել խնդիրը, կարող եք զանգահարել Կալիֆոռնիա նահանգի օմբուդսմանին՝
(800) 896-4042 – Միայն Կալիֆոռնիայում
(916) 654-3890
(800) 896-2512 TTY
ՖԱՔՍ. (916) 653-9194
էլ. փոստ. ombudsmn@dmhhq.state.ca.us

Դուք կարող եք նաև նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել: Նահանգային անկողմնակալ վերաքննության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի էջ 33-ը:

«Medi-Cal»-ի հոգեբուժական ծառայությունները

Բովանդակություն

Լոս Անջելեսի շրջան

Ձեզ ողջունում է Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծրագիրը 1
Ինչպես շտապ օգնություն ստանալ
Կարևոր հեռախոսահամարներ 3
Ինչպե՞ս իմանամ, եթե որևէ մեկն անհապաղ օգնության կարիք ունի ... 3
Ի՞նչ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ է տրամադրում Լոս Անջելեսի շրջանը 3
Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծրագիրը/Տեղեկություններ
Ինչպե՞ս ստանամ այդ ծառայությունները 4
Ինչպե՞ս լրացուցիչ տեղեկություններ ստանամ Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծառայությունների, այդ թվում՝ բժիշկների, հոգեբույժների, կլինիկաների և հիվանդանոցների վերաբերյալ 4
Ինչպե՞ս լրացուցիչ տեղեկություններ ստանամ Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծառայությունների, այդ թվում՝ բժիշկների, հոգեբույժների, կլինիկաների և հիվանդանոցների վերաբերյալ 5
Ուրիշ ի՞նչ լեզուներով և տեսքով գոյություն ունեն այդ նյութերը..... 5
Կարո՞ղ եմ ես այցելել Լոս Անջելեսի շրջանի «Սպասարկողների ցուցակում» ընդգրկված ցանկացած բժշկի, հոգեբույժի, կլինիկա կամ հիվանդանոց 6
Ի՞նչ տեղի կունենա, եթե ես փոխեմ բժշկին, հոգեբույժին կամ կլինիկան 6
Ինչպե՞ս ստանամ «Սպասարկողների ցուցակի» օրինակը 6
Կարո՞ղ եմ ես «Սպասարկողների ցուցակի» օգնությամբ գտնել մեկին, որը կարող է օգնել ինձ..... 6
Կարո՞ղ եմ ես այցելել Լոս Անջելեսի շրջանի «Սպասարկողների ցուցակում» չընդգրկված ցանկացած բժշկի, հոգեբույժի, կլինիկա կամ հիվանդանոց 7
Ի՞նչ անել եթե ինձ հրատապ հոգեբուժական ծառայություններ են հարկավոր հանգստյան օրերին կամ գիշերը 7
Ինչպե՞ս կարող եմ ստանալ այնպիսի հոգեբուժական ծառայություններ, որոնք իմ սպասարկողը չի տրամադրում 8
Ինչպե՞ս կարող եմ այցելել բժշկի ոչ թե հոգեկան այլ որևէ այլ բնույթի խնդրի համար 8
Ի՞նչ անել, եթե ես խնդիր ունեմ կամ բավարարված չեմ իմ ստացած հոգեբուժական ծառայություններով 8
Ի՞նչ է նպաստառուների ծառայությունը: Ինչո՞վ է այն զբաղվում: Ինչպե՞ս դիմեմ ծառայության աշխատակիցներին 9
Արդյո՞ք Լոս Անջելեսի շրջանը գաղտնի է պահում իմ վերաբերյալ հոգեբուժական տվյալները 9

Կալիֆոռնիայի նահանգ

Ընդհանուր տեղեկություններ ողջ նահանգի համար
Ինչպե՞ս իմանամ, եթե որևէ մեկն անհապաղ օգնության կարիք ունի .. 1
Շրջանային հոգեբուժական ծրագրերը
Ի՞նչ են մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները 2
Որտե՞ղ կարող եմ հոգեբուժական ծառայություններ ստանալ 2
Ինչպե՞ս ծառայություններ ստանամ 2

Կալիֆոռնիայի նահանգ *(Շարունակություն)*

Կարևոր տեղեկություն «Medi-Cal»-ի մասին

Ո՞վ կարող է «Medi-Cal» ստանալ 4
Ես պե՞տք է վճարեմ «Medi-Cal»-ի համար 4
Ինչպե՞ս հոգեբուժական ծրագրի կողմից չվճարվող «Medi-Cal»-ի ծառայություններ ստանալ 5
Ի՞նչ է իրենից ներկայացնում Մանկական առողջության և հաշմանդամության ծրագիրը (CHDP) 6

Ինչպես շտապ օգնություն ստանալ

Դուք շտապ օգնության կարի՞ք ունեք 8
Շտապ օգնության ի՞նչ տիպի ծառայություններ են տրամադրվում 9
Ո՞ր դեպքերում իմ ՀՕ-ն պարտավոր չէ վճարել հետկայունացման խնամքի համար 10

Ծառայությունները

(ՉԱՓԱՀԱՍՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵՑՆԵՐԸ)

Ինչպե՞ս իմանամ, որ ես օգնության կարիք ունեմ 11
Ի՞նչ նշաններ կարող են հուշել ինձ, որ ես օգնության կարիք ունեմ 11
Ի՞նչ ծառայություններ են տրամադրվում 12

(ԵՐԵԽԱՆԵՐԸ, ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ)

Ինչպե՞ս պարզել, որ երեխան օգնության կարիք ունի 15
Ինչպե՞ս պարզել, որ պատանին կամ երիտասարդն օգնության կարիք ունի 16
Ի՞նչ ծառայություններ են տրամադրվում 17
Հատուկ ծառայություններ գործու՞մ են երեխաների, պատանիների և երիտասարդների համար 17
Ի՞նչ են վարքագծի բուժական ծառայությունները (ՎԲՕ) 18
Ո՞վ կարող է ՎԲՕ ստանալ 19
Որևէ այլ բան հարկավո՞ր է ՎԲՕ ստանալու համար 19
Ինչպե՞ս ՎԲՕ ստանամ 20
Ո՞վ է որոշում, թե արդյո՞ք ես ՎԲՕ-ի կարիք ունեմ և որտեղ կարող եմ ստանալ ծառայությունները 20
Ի՞նչ պետք է պարունակի ՎԲՕ-ի ծրագիրը 20

«Բժշկական անհրաժեշտության» չափանիշները

Ի՞նչ է «բժշկական անհրաժեշտությունը» և ինչու՞ է այն կարևոր 21
Ի՞նչ չափանիշներով է որոշվում «բժշկական անհրաժեշտությունը» մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու համար՝ բացի հիվանդանոցի ծառայություններից 21
Ի՞նչ չափանիշներով է որոշվում «բժշկական անհրաժեշտությունը»՝ մինչև 21 տարեկաններին տրամադրվող մասնագիտական հոգեբուժական ծառայությունների ծախսը փոխհատուցելու համար 23

Ծանուցագիրը

Ի՞նչ է ծանուցագիրը 25
Ե՞րբ ես ծանուցագիր կստանամ 25
Ինձ միշտ ծանուցագիր կուղարկվի՞, եթե ես չստանամ ինձ անհրաժեշտ ծառայությունները 26
Ի՞նչ տեղեկություններ կպարունակի ծանուցագիրը 26
Ի՞նչ է հարկավոր անել ծանուցագիր ստանալիս 26

Կալիֆոռնիայի նահանգ *(Շարունակություն)*

Խնդիրների լուծման ընթացակարգը

Ի՞նչ անել, եթե ես իմ ուզած ծառայությունները չեմ ստանում իմ ՀԾ-ից 27

Ես կարո՞ղ եմ օգնություն ստանալ բողոքարկման դիմում, գանգատ կամ նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնելու հարցում 28

Ի՞նչ անել, եթե ես օգնության կարիք ունեմ որևէ խնդիր լուծելու համար, սակայն չեմ ցանկանում գանգատ կամ բողոքարկման դիմում ներկայացնել 28

(ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ. սովորական և արտահերթ)

Ի՞նչ է սովորական բողոքարկումը 29

Ե՞րբ կարող եմ ես բողոքարկման դիմում ներկայացնել 30

Ինչպե՞ս կարող եմ բողոքարկման դիմում ներկայացնել 30

Ինչպես իմանամ, որ իմ բողոքարկման դիմումի կապակցությամբ որոշում է կայացվել 31

Բողոքարկման դիմումը ներկայացնելու համար վերջնաժամկետ գոյություն ունի՞ 31

Ե՞րբ որոշում կկայացվի իմ բողոքարկման կապակցությամբ 31

Ի՞նչ անել, եթե ես չեմ կարող 45 օր սպասել մինչև որոշումն ընդունվի 31

Ի՞նչ է բողոքարկման արտահերթ դիմումը 31

(ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. սովորական և արտահերթ)

Ի՞նչ է նահանգային անկողմնակալ վերաքննությունը 33

Նահանգային անկողմնակալ վերաքննության ի՞նչ իրավունքներ ունեմ ես 33

Ե՞րբ կարող եմ ես նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել 33

Ինչպե՞ս նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել ... 34

Նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնելու համար վերջնաժամկետ գոյություն ունի՞ 34

Կարո՞ղ եմ ես շարունակել ստանալ ծառայությունները, մինչ սպասում եմ նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը 35

Ի՞նչ է հարկավոր անել, եթե ես անկարող եմ 90 օր սպասել նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը 35

(ԳԱՆԳԱՏՆԵՐԸ)

Ի՞նչ է գանգատը 36

Ե՞րբ կարող եմ ես գանգատ ներկայացնել 36

Ինչպե՞ս գանգատ ներկայացնեմ 36

Ձեր իրավունքները

Ի՞նչ իրավունքներ ունեմ ես 38

(ՆԱԽՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ)

Ի՞նչ է նախնական ցուցումը 41

(ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ)

Ինչու՞ է մշակութային հարցերում տեղեկացվածությունը և տարբեր լեզուներով ծառայություններ մատուցելը կարևոր 42

Ինչ կերպ կարող են ծառայությունները տրամադրվել Ձեզ

Ինչպե՞ս մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանամ 44

Ինչպես կարող եմ մասնագիտացված հոգեբուժական
ծառայություններ տրամադրող սպասարկող գտնել 44
Երբ ես սպասարկող գտնեմ, ՀԾ-ն նրան կհայտնի՞ թե ես ինչ
ծառայություններ պետք է ստանամ 45
Ի՞նչ սպասարկողների ծառայություններից է օգտվում իմ ՀԾ-ն 46

Ձեզ ողջունում է Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծրագիրը

Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծառայությունները և «Medi-Cal»-ի հոգեբուժական ծրագիրը ողջունում են Ձեզ:
Հոգեբուժության դեպարտամենտի համար մեծ պատիվ է Լոս Անջելեսի շրջանի բնակիչներին սպասարկելը՝ Շրջանի և պայմանագրային հիմունքներով մեզ հետ համագործակցող կազմակերպությունների կողմից ղեկավարվող կլինիկաների, երթևեկ ծառայությունների և հիվանդանոցների միջոցով: Մենք մեր հնարավորության սահմաններում ամեն ինչ անում ենք՝ մատչելի գներով բարձրորակ ծառայություն մատուցելու համար Ձեր իսկ բնակավայրում և հնարավորինս անկաշկանդ պայմաններում: Դա նշանակում է, որ մենք անում ենք հնարավոր ամեն ինչ, Լոս Անջելեսի շրջանի բնակիչների հոգեբուժական կարիքները հոգալու նպատակով պետական միջոցները հիմնավորված կերպով ծախսելու համար: Խնդրում ենք ուշադրությամբ կարդալ այս գրքույկը: Դրանում պարունակվում են կարևոր տեղեկությունները, որոնք Ձեզ անհրաժեշտ է իմանալ:

Որպես Ձեզ հոգեբուժական ծառայություններ մատուցող ծրագիր, մենք՝

- կգտնենք Ձեր հարցերի պատասխանները՝ հոգեբուժական ծառայությունների վերաբերյալ.
- կհայտնենք Ձեզ, թե որ հոգեբուժական ծառայություններն են վճարվում «Medi-Cal»-ի կողմից.
- կպարզենք, թե ինչ տիպի հոգեբուժական ծառայությունների կարիք ունեք Դուք և կօգնենք Ձեզ ստանալ այդ ծառայությունները.
- հարգանքով կվերաբերվենք Ձեզ.

- հոգ կտանենք, որ Դուք ծառայություններն ստանաք ապահով միջավայրում.
- կօգնենք Ձեզ այնպիսի խնամք ստանալ, որը հաշվի է առնում Ձեր մշակութային առանձնահատկությունները:

Որպես ծրագրի մասնակից՝ Դուք նույնպես ունեք որոշակի պարտավորություններ, մասնավորապես.

- մեզ անկեղծ և ամբողջական տեղեկություն տրամադրել Ձեր հոգեբուժական կարիքների մասին.
- գործուն մասնակցություն ունենալ Ձեր բուժմանը.
- ժամանակին կատարել Ձեզ նշանակված այցելությունները.
- զանգահարել և զգուշացնել, եթե չեք կարող ներկայանալ նշանակված այցելությանը.
- Ձեր սպասարկողի հետ միասին սահմանել բուժման նպատակները:

Կարևոր հեռախոսահամարներ

Շտապ օգնություն	911
Հոգեբուժական սպասարկման կապի կենտրոն	(800) 854-7771 (562) 651-2549 *(TDD/TTY)*
Նպաստառուների ծառայություն	(213) 738-4949
Հիվանդի իրավունքների գրասենյակ	(800) 700-9996
Տեղեկությունների պաշտպան. գլխավոր պաշտոնյա	(213) 974-2164

Ինչպե՞ս իմանամ, եթե որևէ մեկն անհապաղ օգնության կարիք ունի

Եթե անգամ տվյալ անձի վիճակը չի կարող որակվել որպես շտապ բժշկական օգնություն պահանջող վիճակ, հոգեկան բնույթի խանգարումներ ունեցող անձն անհապաղ օգնության կարիք ունի, եթե ճշմարիտ են ստորև նշված մեկ կամ մի քանի պայմանները.

- լսում կամ տեսնում է այնպիսի բաներ, որոնք այլ մարդիկ չեն լսում և տեսնում.
- տենդորեն և հաճախակի մտորում կամ խոսում է մահվան մասին.
- ուրիշներին է տալիս իրեն պատկանող իրերը.
- սպառնում է, որ ձեռք կբարձրացնի իր վրա (ինքնասպանություն).
- ցանկանում է վնասել իրեն կամ ուրիշներին:

Եթե վերը նշվածներից մեկը կամ մի քանիսը ճշմարիտ են, զանգահարեք 911 կամ Լոս Անջելեսի շրջանի ՀԾ՝ (800) 854-7771 (շուրջօրյա անվճար) հեռախոսահամարով: Հոգեբույժները պատրաստ են օրվա կամ գիշերվա ցանկացած ժամի պատասխանելու Ձեր զանգին:

Այլ ծառայություն-ները, որոնք երբեմն անհրա-ժեշտ են լինում, թվարկված են այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի էջ 11-ում (չափահասների համար) և էջ 15-ում (երեխաների համար):

Ի՞նչ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ է տրամադրում Լոս Անջելեսի շրջանը

Հոգեբուժական ծառայությունները, որոնք Դուք կարող եք ստանալ.

- **հիվանդանոցային հոգեբուժական ծառայություններ՝** հիվանդանոցում տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ.
- **հոգեբուժական ծառայություններ՝** հոգեբուժության գծով մասնագիտացած արտոնագրված հոգեբույժի/բժշկի կողմից տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ.
- **հոգեբանական ծառայություններ՝** հոգեկան խանգարումներն ախտորոշելու և բուժելու նպատակով արտոնագրված հոգեբան-

մասնագետի կողմից տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ.

- **նպատակային համալիր օգնություն՝** մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ և գործունեություն, որոնք օգնում են ստանալ ինքնուրույն կյանք ապահովելու և/կամ պահպանելու համար անհրաժեշտ համայնքային ծառայություններ.
- **վերականգնման ծառայություններ՝** մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ, որոնք օգնում են մարդկանց բարելավել, պահպանել և վերականգնել իրենց առօրյա կյանքը համայնքում.
- **կացարանային հոգեբուժական ծառայություններ՝** արտոնագրված հոգեբուժական ծառայությունների մասնագիտացված կացարաններում տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ

Վերը նշված ծառայություններն այն ծառայություններն են, որոնք, Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ի կարծիքով, հոգեբուժական օգնության կարիք ունեցող մարդկանց օգնելու ամենամեծ հավանականությունն ունեն: Երբեմն նաև այլ ծառայություններ են անհրաժեշտ լինում: Այլ ծառայությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել, թվարկված են այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի էջ 11-ում (չափահասների համար) և էջ 15-ում (երեխաների համար):

Ինչպե՞ս ստանամ այդ ծառայությունները

Զանգահարեք Լոս Անջելեսի շրջանային ՀԾ-ի հոգեբուժական սպասարկման կապի կենտրոն (Access Telecommunication Center)՝ (800) 854-7771 հեռախոսահամարով: Ձեզ կկապեն որևէ սպասարկողի հետ և այցելություն կնշանակվի: TDD/ TTY ծառայության համար՝ զանգահարեք (562) 651-2549 հեռախոսահամարով:

Ի՞նչ է նշանակում «արտոնված» լինել հոգեբուժական ծառայություններ ստանալու և ի՞նչ գումարով, որքա՞ն ժամանակով և ի՞նչ սահմաններում են տրամադրվում այդ ծառայությունները

Դուք, Ձեր սպասարկողը և Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն միասին եք որոշում, թե Դուք ինչ ծառայություններ պետք է ստանաք ՀԾ-ից, այդ թվում՝ որքան հաճախ և որքան ժամանակ Դուք այդ ծառայությունների կարիքը կունենաք:

Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն կարող է Ձեր սպասարկողից պահանջել, Ձեզ որևէ ծառայություն տրամադրելուց առաջ, հայտնել ՀԾ-ին թե ինչու է սպասարկողը կարծում, որ ծառայությունը պետք է տրամադրվի, որպեսզի ՀԾ-ն սպասարկողի որոշման գնահատում կատարի: Սպասարկողի որոշման գնահատումը ՀԾ-ն կատարում է մասնագետ հոգեբույժի օգնությամբ: Այդ գնահատումը կոչվում է «ՀԾ-ի վճարման համար արտոնություն տալու ընթացակարգ»: Նահանգը պահանջում է, որ Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն նման արտոնություն

տալու ընթացակարգեր ունենա ինտենսիվ ցերեկային բուժման, ցերեկային վերականգնման և վարքագծի բուժական ծառայությունների (ՎԲԾ) համար:

Վճարման համար արտոնություն տալու հարցը որոշելիս Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն ղեկավարվում է նահանգային օրենքներով, որոնց կարող եք ծանոթանալ այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի էջ 4-ում: Եթե Ձեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր այն մասին, թե ինչ կերպ է Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն որոշում վճարման արտոնություն տալու հարցը կամ երբ ենք մենք Ձեր սպասարկողից պահանջում դիմել ՀԾ-ին՝ վճարման արտոնություն ստանալու համար, խնդրում ենք զանգահարել Լոս Անջելեսի շրջանի ՀԾ՝ **(213) 738-4949** հեռախոսահամարով:

Ինչպե՞ս լրացուցիչ տեղեկություններ ստանամ Լոս Անջելեսի շրջանի հոգեբուժական ծառայությունների, այդ թվում՝ բժիշկների, հոգեբույժների, կլինիկաների և հիվանդանոցների վերաբերյալ

Սպասարկողների ցուցակի և Լոս Անջելեսի ՀԾ-ի կառուցվածքի և գործունեության մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Նպաստառուների ծառայություն՝ **(213) 738-4949** հեռախոսահամարով կամ այցելեք հոգեբուժական դեպարտամենտի ինտերնետային էջը՝ www.dmh.co.la.ca.us հասցեով:

Կարող եք նաև այցելել հոգեբուժական դեպարտամենտ (550 S. Vermont Ave., Los Angeles, CA 90020) և անձամբ վերցնել այդ տեղեկությունները: Դեպարտամենտի փաստաբաններից մեկը կընդունի Ձեզ և կպատասխանի Ձեր հարցերին:

Ուրիշ ի՞նչ լեզուներով և տեսքով գոյություն ունեն այդ նյութերը

Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն կարող է նյութեր տրամադրել շրջանի 10 հիմնական լեզուներով: Հաճախորդները կարող են զանգահարել «ACCESS»՝ **(800) 854-7771** հեռախոսահամարով և/կամ Հիվանդների իրավունքների գրասենյակ՝ **(800) 700-9996** հեռախոսահամարով և խնդրել այն սպասարկողների ցուցակը, որոնք կարող են ծառայություններ տրամադրել իրենց նախընտրած լեզվով: Կարելի է նաև այցելել ՀԾ-ի ինտերնետային էջը և տեղեկանալ, թե որ սպասարկողներն են ծառայություններ մատուցում իրենց լեզվով (ՀԾ-ի ինտերնետային էջի հասցեն է՝ **www.dmh.co.la.ca.us**): Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն տեղեկություններ է տրամադրում նաև տեսողական և լսողական դժվարություններ ունեցողների համար (օրինակ՝ խոշոր տառերով գրված կամ ձայնագրված) և առաջարկում է Կալիֆոռնիայի ռելե (California Relay) համակարգի ու նշանային լեզվի թարգմանիչների ծառայությունները՝ խուլ կամ ծանր լսող հաճախորդների համար: Խնդրում ենք զանգահարել Հիվանդների իրավունքների գրասենյակ՝ **(800) 700-9996** կամ **(213) 738-4888**

հեռախոսահամարով կամ Կալիֆոռնիայի ռելե ծառայություններ՝ **(800) 735-2929** հեռախոսահամարով:

Կարո՞ղ եմ ես այցելել Լոս Անջելեսի շրջանի «Սպասարկողների ցուցակում» ընդգրկված ցանկացած բժշկի, հոգեբույժի, կլինիկա կամ հիվանդանոց

Դուք իրավունք ունեք ինքներդ Ձեր սպասարկողին ընտրելու: Եթե Ձեր ընտրած սպասարկողն ընդգրկված չէ Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ում, ապա Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն լիազորված չէ վերահսկելու, թե ինչպես է այդ կոնկրետ սպասարկողը տրամադրում ծառայությունները: Բացի այդ, որոշ սպասարկողներ կարող են չընդունել «Medi-Cal»՝ վճարման փոխարեն: Նախքան որևէ սպասարկողի մոտ ծառայություն ստանալը Դուք պետք է պարզեք, թե արդյո՞ք նա ընդունում է «Medi-Cal»՝ որպես վճարում: Դա Ձեր պատասխանատվությունն է: Եթե Դուք համաձայն եք վճարել «Medi-Cal»-ի կողմից չվճարվող ծառայությունների համար, ապա կարող եք ցանկացած ծառայություն ստանալ, քանի որ այդ դեպքում դրանք ոչնչով չեն սահմանափակվում:

Եթե Դուք հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել «ACCESS»՝ **(800) 854-7771** շուրջօրյա հեռախոսահամարով կամ Նպաստառուների ծառայություն՝ **(213) 738-4949** հեռախոսահամարով:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես փոխեմ բժշկին, հոգեբույժին կամ կլինիկան

Եթե Դուք ցանկանում եք փոխել բժշկին, կարող եք ուղղակիորեն խոսել սպասարկողի հետ: Եթե Ձեր խնդրանքը չկատարվի կամ նպաստառուն զգա, որ լրացուցիչ օգնության կարիք ունի, ապա կարող եք զանգահարել Հիվանդի իրավունքների գրասենյակ, որտեղ կօգնեն Ձեզ:

Ինչպե՞ս ստանամ «Սպասարկողների ցուցակի» օրինակը

Զանգահարեք Նպաստառուների ծառայություն՝ **(213) 738-4949** հեռախոսահամարով կամ վերցրեք ցուցակը Հոգեբուժական դեպարտամենտից (550 S. Vermont Ave., Los Angeles, CA 0020):

Կարո՞ղ եմ ես «Սպասարկողների ցուցակի» օգնությամբ գտնել մեկին, որը կարող է օգնել ինձ

Նպաստառուները կարող են սպասարկողների մասին տեղեկություններ ստանալ ինչպես «ACCESS»-ի, այնպես էլ Հիվանդների իրավունքների գրասենյակի աշխատակիցներից: Կարելի է նաև այցելել Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ի ինտերնետային էջ և պարզել, թե ինչ սպասարկողներից կարելի է օգտվել նպաստառուին հետաքրքրող տարածքում:

Կարո՞ղ եմ ես այցելել Լոս Անջելեսի շրջանի «Սպասարկողների ցուցակում» չընդգրկված ցանկացած բժշկի, հոգեբույժի, կլինիկա կամ հիվանդանոց

Դուք իրավունք ունեք ինքներդ Ձեր սպասարկողին ընտրելու: Եթե Ձեր ընտրած սպասարկողն ընդգրկված չէ Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ում, ապա Լոս Անջելեսի շրջանի ՀԾ-ն լիազորված չէ վերահսկելու, թե ինչպես է այդ կոնկրետ սպասարկողը տրամադրում ծառայությունները: Բացի այդ, որոշ սպասարկողներ կարող են չընդունել «Medi-Cal»՝ վճարման փոխարեն: Նախքան որևէ սպասարկողի մոտ ծառայություն ստանալը Դուք պետք է պարզեք, թե արդյո՞ք նա ընդունում է «Medi-Cal»՝ որպես վճարում: Դա Ձեր պատասխանատվությունն է: Եթե Դուք համաձայն եք վճարել «Medi-Cal»-ի կողմից չվճարվող ծառայությունների համար, ապա կարող եք ցանկացած ծառայություն ստանալ, քանի որ այդ դեպքում դրանք ոչնչով չեն սահմանափակվում:

Եթե Դուք հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել «ACCESS»՝ **(800) 854-7771** շուրջօրյա հեռախոսահամարով կամ Նպաստառուների ծառայություն՝ **(213) 738-4949** հեռախոսահամարով:

Ի՞նչ անել եթե ինձ հրատապ հոգեբուժական ծառայություններ են հարկավոր հանգստյան օրերին կամ գիշերը

Խնդրում ենք զանգահարել 911 կամ «ACCESS»՝ **(800) 854-7771** հեռախոսահամարով, կամ գնալ մոտակա շտապ օգնության սենյակը:

Կարող եք նաև դիմել ստորև նշված կազմակերպություններին՝ շուրջօրյա և շաբաթը յոթ օր.

Ինքնասպանության կանխման և գոյատևման հեռախոսագիծ..... **(877) 727-4747** (ԼԱ շրջանում)
..... **(310) 391-1253** (ԼԱ շրջանից դուրս)
Օլժեյմերի ընկերակցության գիծ .... **(800) 660-1993**
Երիտասարդական ճգնաժամի Կալիֆոռնիայի հեռախոսագիծ ..... **(800) 843-5200**
Երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի հեռախոսագիծ ..... **(800) 540-4000**
Ընտանեկան բռնության – բռնի սեռական կապի հեռախոսագիծ ..... **(800) 339-3940**
Տարեցների նկատմամբ դաժան վերաբերմունքի հեռախոսագիծ ..... **(800) 992-1660**
ՄԻԱՎ-ի/ՁԻԱՀ-ի ազգային հեռախոսագիծ ..... **(800) 342-2437**
Թմրադեղերի և ոգելից խմիչքների չարաշահման հեռախոսագիծ ..... **(800) 564-6600** *(9 a.m. - 5 p.m. Երկուշաբթի – Ուրբաթ)*

Ինչպե՞ս կարող եմ ստանալ այնպիսի հոգեբուժական ծառայություններ, որոնք իմ սպասարկողը չի տրամադրում

Եթե Ձեր սպասարկողը չի տրամադրում Ձեզ անհրաժեշտ հոգեբուժական ծառայությունները, Դուք կարող եք խնդրել, որպեսզի նա ուղեգիր տա այլ մասնագետի այցելելու համար: Կարող եք նաև զանգահարել «ACCESS» (800) 854-7771 հեռախոսահամարով՝ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու ուղեգրերի համար:

Ինչպե՞ս կարող եմ այցելել բժշկի ոչ թե հոգեկան այլ որևէ այլ բնույթի խնդրի համար: Ինչպե՞ս են մարդիկ «Medi-Cal»-ի այլ կարգի բժշկական ծառայություններ ստանում Լոս Անջելեսի շրջանում

Եթե Դուք ոչ թե հոգեբուժական, այլ որևէ այլ տիպի բժշկական ծառայության կարիք ունեք, խնդրեք Ձեր բժշկին ուղարկել Ձեզ համապատասխան մասնագետի մոտ: Կարող եք նաև Ձեր սովորական առողջապահական սպասարկողից լրացուցիչ տեղեկություններ ստանալ: Բացի այդ, Դուք կարող եք Ձեր տարածքի «Դեղին էջեր» հեռախոսագրքում գտնել Ձեր մերձակայքում գործող որևէ բժիշկ:

Ի՞նչ անել, եթե ես խնդիր ունեմ կամ բավարարված չեմ իմ ստացած հոգեբուժական ծառայություններով

Եթե Դուք որևէ խնդիր կամ բարդություն ունեք, կամ բավարարված չեք Ձեր ստացած հոգեբուժական ծառայություններով, ՀՕ-ն ամեն ինչ կանի, որպեսզի Ձեզ հուզող բոլոր հարցերն արագ ու հեշտ լուծում ստանան: Խնդրում ենք զանգահարել ՀՕ՝ (800) 854-7771 հեռախոսահամարով, պարզելու համար, թե ինչպես կարելի է լուծում գտնել Ձեզ հուզող հարցերին:

Ծառայությունների հետ կապված կամ որևէ հարց ՀՕ-ի հետ լուծելու երեք եղանակ կա: Դուք կարող եք բանավոր կամ գրավոր կերպով բողոք ներկայացնել Ձեր ՀՕ-ին՝ այդ հարցի կապակցությամբ: Դուք կարող եք բողոքարկել ցանկացած հարց բանավոր (ապա գրավոր բողոքարկման հայց ներկայացնելով) կամ գրավոր կերպով: Դուք կարող եք նաև նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել Սոցիալական ծառայությունների դեպարտամենտից:

ՀՕ-ի գանգատների ներկայացման և բողոքարկման ընթացակարգերի և նահանգային անկողմնակալ վերաքննության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ խնդրում ենք կարդալ այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի համապատասխան գլուխները գանգատների, բողոքարկման և նահանգային անկողմնակալ վերաքննության մասին՝ սկսած էջ 27-ից:

Ձեր խնդիրը կլուծվի հնարավորին չափ արագ և հեշտ: Այն գաղտնի կպահվի: Գանգատի, բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության համար Դուք չեք ենթարկվի խտրականության կամ որևէ այլ կարգի տույժի: Դուք կարող եք որևէ այլ անձի լիազորել Ձեր

անունից հանդես գալ գանգատի, բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության ժամանակ:

Ի՞նչ է նպաստառուների ծառայությունը: Ինչո՞վ է այն զբաղվում: Ինչպե՞ս դիմեմ ծառայության աշխատակիցներին

Նպաստառուների ծառայությունը Հիվանդի իրավունքների գրասենյակի մասն է կազմում: Նպաստառուների ծառայության աշխատակիցները կարող են Ձեզ օգնություն ցույց տալ հոգեբուժական ծառայությունների հարցում՝ Ձեզ համապատասխան տեղեկություններ և մասնագետներին այցելելու ուղեգրեր տրամադրելով, օգնելով Ձեզ խնդիրների լուծման հարցում և Ձեր գանգատներն ու բողոքարկման դիմումները քննելով:

Նպաստառուների ծառայության աշխատակիցներին կարելի է զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով.
(213) 738-4949՝ ոչ հիվանդանոցային գանգատների/բողոքարկման կապակցությամբ
(213) 738-4888՝ հիվանդանոցային գանգատների/բողոքարկման կապակցությամբ

Արդյո՞ք Լոս Անջելեսի շրջանը գաղտնի է պահում իմ վերաբերյալ հոգեբուժական տվյալները

Այո, Ձեր անձնական առողջապահական տվյալները գաղտնի են և պաշտպանվում են նահանգային և դաշնային օրենքներով: Մենք մեզ մոտ գրանցում ենք Ձեր ստացած խնամքի և ծառայությունների մասին տվյալները: Դա անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք Ձեզ բարձրորակ խնամք տրամադրել և կատարենք օրենքով պահանջվող մեր պարտավորությունները: Երբ դա հարկավոր և տեղին է, մենք հոգ կտանենք, որպեսզի Ձեր վերաբերյալ նվազագույն անհրաժեշտ տեղեկություն բացահայտվի Ձեր բուժման ընթացքում:

Գանգատների, բողոքարկման և նահանգային անկողմնակալ վերաքննության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ այս գրքույկի Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժնի «Խնդիրների լուծման ընթացակարգը» գլուխը՝ սկսած էջ 27-ից:

«Medi-Cal»-ի հոգեբուժական ծառայությունները

Ընդհանուր տեղեկություններ ողջ նահանգի համար

Ինչու՞ է կարևոր այս գրքույկը կարդալը

Գրքույկի առաջին բաժինը բացատրում է, թե ինչպես կարելի է «Medi-Cal»-ի հոգեբուժական ծառայություններ ստանալ՝ Ձեր շրջանի «Հոգեբուժական ծրագրով»: Այս երկրորդ բաժնում Դուք կիմանաք, թե ինչպես է գործում «Medi-Cal» ծրագիրը, և ինչպես են գործում «Medi-Cal»-ի մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները՝ նահանգի բոլոր շրջաններում:

Եթե այժմ չկարդաք այս բաժինը, խորհուրդ ենք տալիս պահել այն՝ հետագայում կարդալու համար:

Եթե կարծում եք, որ իրավասու եք «Medi-Cal» ստանալու և կարծում եք, որ Ձեզ հոգեբուժական օգնություն է հարկավոր, զանգահարեք Ձեր շրջանի հոգեբուժական ծրագիր և հարցրեք, թե ինչ ծառայություններ են տրամադրվում:

Ի՞նչ են մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները

Մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները հատուկ առողջապահական ծառայություններ են այն անձանց համար, որոնք որևէ հոգեկան հիվանդություն կամ զգայական բնույթի խնդիր ունեն, որը սովորական բժիշկն անկարող է բուժել:

Մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների թվում են՝

- ճգնաժամային խորհրդատվությունը՝ այն անձանց համար, ովքեր լուրջ հոգեկան ճգնաժամ են ապրում.
- անհատական, խմբային կամ ընտանեկան բուժումը.
- վերականգնման ծառայությունները, որոնք օգնում են հոգեկան հիվանդություն ունեցող անձանց վերականգնել իրենց բնականոն առօրյա կյանքը.
- մեկօրյա հատուկ ծրագրեր՝ հոգեկան հիվանդեների համար.
- այնպիսի դեղերի դեղատոմսեր, որոնք օգնում են բուժել հոգեկան հիվանդությունը.
- օգնություն այն դեղերի ընդունումը ծրագրելու հարցում, որոնք օգնում են բուժել հոգեկան հիվանդությունը.
- օգնություն Ձեզ անհրաժեշտ հոգեբուժական ծառայությունը գտնելու հարցում:

Որտե՞ղ կարող եմ հոգեբուժական ծառայություններ ստանալ

Դուք կարող եք հոգեբուժական ծառայություններ ստանալ այն շրջանում, որտեղ բնակվում եք: Յուրաքանչյուր շրջանում հոգեբուժական ծառայություն է գործում երեխաների, պատանիների, չափահասների և տարեցների համար: Ձեր շրջանի հոգեբուժական ծառայությունն ունի հոգեբույժ սպասարկողներ (հոգեբույժներ, հոգեբաններ և այլն):

Ինչպե՞ս ծառայություններ ստանամ իմ շրջանի հոգեբուժական ծրագրով

Զանգահարեք Ձեր շրջանի հոգեբուժական ծրագիր և դիմեք օգնության համար: Դրա համար չի պահանջվում Ձեր բժշկի թույլտվությունը կամ հոգեբույժին այցելելու ուղեգիր ստանալ: Պարզապես զանգահարեք Ձեր շրջանի հեռախոսահամարով, որը նշված է այս գրքույկի առջևի մասում: Զանգն անվճար է:

Դուք կարող եք նաև այցելել ցանկացած դաշնային արտոնագրված բուժկենտրոն, գյուղական կենտրոն կամ ամերիկյան հնդկացիների համար նախատեսված «Medi-Cal»-ի որևէ կենտրոն: (Սրանք Ձեր տարածքում գործող տարբեր կլինիկաների պաշտոնական անուններն են: Եթե Դուք համոզված չեք, որ ճիշտ կլինիկա եք այցելել, հարցրեք կլինիկայի աշխատակիցներից: Այս տիպի կլինիկաները սովորաբար սպասարկում են առողջության ապահովագրություն կամ «Medi-Cal» չունեցող անձանց:)

Ըստ հոգեբուժական ծրագրի՝ Ձեր շրջանի հոգեբուժական ծրագիրը (ՀԾ) պարտավոր է՝

- պարզել, թե արդյո՞ք դիմող անձը ՀՕ-ով մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու իրավասություն ունի.
- ունենալ շուրջօրյա և շաբաթը 7 օր գործող անվճար հեռախոսահամար, ուր զանգահարելով Դուք կարող եք տեղեկանալ, թե ինչպես ստանալ ՀՕ-ի ծառայությունները:
- բավարար թվով սպասարկողներ ունենալ, որպեսզի Դուք կարողանաք ստանալ ՀՕ-ով նախատեսված հատուկ հոգեբուժական ծառայությունները, երբ դրանց կարիքն ունեք.
- տեղեկացնել Ձեզ, թե ինչ ծառայություններ են տրամադրվում Ձեր շրջանի ՀՕ-ով, և ինչպես օգտվել դրանցից.
- Ձեզ սպասարկել Ձեր ընտրած լեզվով կամ անվճար թարգմանչի միջոցով (անհրաժեշտության դեպքում) և տեղեկացնել Ձեզ, որ Դուք կարող եք օգտվել թարգմանչի ծառայություններից.
- Ձեզ գրավոր տեղեկություն տրամադրել այն մասին, թե ինչ ծառայություններ կարող եք ստանալ այլ լեզուներով կամ այլ ձևով՝ կախված Ձեր շրջանի պահանջներից:

Ո՞վ կարող է «Medi-Cal» ստանալ

Դուք իրավասու եք «Medi-Cal» ստանալու, եթե հետևյալ խմբերից որևէ մեկին եք պատկանում

- 65 տարեկան կամ ավելի.
- մինչև 21 տարեկան.
- 21-ից 65 տարեկան չափահաս, որի հետ անչափահաս երեխա է ապրում (չամուսնացած և 21 տարին չբոլորած երեխա).
- կույր կամ հաշմանդամ.
- հղի.
- որոշ կարգի փախստականներ կամ Կուբայից/Հաիթիից ներգաղթածներ.
- ծերանոցում ապրողներ:

Եթե Դուք չեք պատկանում վերը նշված խմբերից որևէ մեկին, զանգահարեք Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ՝ պարզելու համար, թե արդյո՞ք կարող եք ընդգրկվել շրջանային բուժօգնության ծրագրերից որևէ մեկում:

«Medi-Cal» ստանալու համար Դուք պետք է Կալիֆոռնիայի բնակիչ լինեք: «Medi-Cal»-ի անդամագրման դիմումի ձևի համար՝ զանգահարեք կամ այցելեք Ձեր շրջանային սոցիալական ծառայությունների գրասենյակ կամ վերցրեք այն **www.dhs.ca.gov/mcs/medi-calhome/MC210.htm** ինտերնետային հասցեից:

Ես պե՞տք է վճարեմ «Medi-Cal»-ի համար

Կախված Ձեր ամսեկան եկամուտի չափից՝ հնարավոր է, որ անհրաժեշտ լինի վճարել «Medi-Cal»-ի համար:

- Եթե Ձեր եկամուտն ավելի ցածր է, քան Ձեր ընտանիքի չափի ընտանիքների համար «Medi-Cal»-ի կողմից սահմանված գումարը, ապա Դուք չեք վճարի «Medi-Cal»-ի համար:
- Եթե Ձեր եկամուտն ավելի բարձր է, քան Ձեր ընտանիքի չափի ընտանիքների համար «Medi-Cal»-ի կողմից սահմանված գումարը, ապա անհրաժեշտ կլինի որոշ գումար վճարել՝ առողջապահական կամ հոգեբուժական ծառայություններ ստանալու համար: Ձեր վճարած գումարը կոչվում է «բաժնեվճարում»: «Բաժնեվճարումից» հետո՝ «Medi-Cal»-ը կվճարի այդ ամիս «Medi-Cal»-ով Ձեր ստացած բժշկական ծառայությունների մնացած ծախսը: Այն ամիսներին, երբ Դուք որևէ բժշկական ծախս չեք կատարել, Դուք ոչինչ չեք վճարի:
- Հնարավոր է, որ Դուք ստիպված լինեք «համավճարում» կատարելու «Medi-Cal»-ով ստացած Ձեր յուրաքանչյուր բուժման համար: Դա կլինի $1.00՝ առողջապահական կամ հոգեբուժական յուրաքանչյուր ծառայության կամ դեղատոմսային դեղի համար, և

Հիվանդանոց գնալիս միշտ Ձեզ հետ վերցրեք Ձեր անդամության տարբերիչ քարտը (BIC) և առողջապա-հական ծրագրի քարտը, եթե ունեք:

$5.00, եթե Դուք սովորական ծառայությունները ստանալու համար օգտվեք հիվանդանոցի շտապ օգնության սենյակից:

Եթե անհրաժեշտ լինի համավճարում կատարել, Ձեր սպասարկողը կհայտնի Ձեզ այդ մասին:

Ինչպե՞ս հոգեբուժական ծրագրի կողմից չվճարվող «Medi-Cal»-ի ծառայություններ ստանալ

«Medi-Cal»-ի ծառայություններ ստանալու երկու եղանակ կա՝

1. **«Medi-Cal» կառավարվող առողջապահական ծրագրին անդամագրվելով:**
   Եթե Դուք «Medi-Cal» կառավարվող առողջապահական ծրագրի անդամ եք՝
   - Ձեր առողջապահական ծրագիրը պետք է Ձեզ համար սպասարկող գտնի, եթե Ձեզ օգնություն է հարկավոր:
   - Դուք սպասարկվում եք «HMO»-ի (առողջապահական կազմակերպության) կամ նախնական սպասարկողի միջոցով:
   - Բացառությամբ շտապ օգնություն պահանջող իրավիճակների, Դուք պետք է օգտվեք Ձեր առողջապահական ծրագրի սպասարկողներից և կլինիկաներից:
   - Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար՝ Դուք կարող եք օգտվել ծրագրում չընդգրկված սպասարկողի ծառայություններից:
   - Դուք կարող եք որևէ առողջապահական ծրագրի անդամագրվել միայն այն դեպքում, երբ բաժնեվճարում չեք կատարում:

2. **«Medi-Cal» ընդունող անհատ բուժաշխատողներից կամ կլինիկաներից:**
   - Ձեզ սպասարկում են «Medi-Cal» ընդունող անհատ բուժաշխատողները կամ կլինիկաները:
   - Նախքան որևէ սպասարկողի մոտ առաջին անգամ ծառայություն ստանալը, Դուք պետք է հայտնեք նրան, որ «Medi-Cal»-ի անդամ եք, այլապես նա կարող է Ձեզանից վճարում պահանջել:
   - Անհատ բուժաշխատողները կամ կլինիկաները պարտավոր չեն սպասարկել «Medi-Cal»-ի անդամներին, կամ կարող են միայն փոքր թվով անդամների սպասարկել:
   - Բաժնեվճարում կատարող բոլոր անձինք (տես Կալիֆոռնիայի նահանգին նվիրված բաժինը էջ 4-ում) այս կերպ են սպասարկվում:

Եթե Ձեզ հոգեբուժական ծրագրի կողմից չվճարվող հոգեբուժական ծառայություններ են հարկավոր՝

- եվ Դուք առողջապահական ծրագրի անդամ եք, ապա հնարավոր է, որ կարողանաք այդ ծառայություններն ստանալ ձեր առողջապահական ծրագրից: Եթե Ձեզ առողջապահական ծրագրի կողմից չվճարվող հոգեբուժական ծառայություններ են հարկավոր, ապա Ձեր առողջապահական ծրագրի նախնական խնամքի բժիշկը կարող է օգնել Ձեզ գտնել անհրաժեշտ բժշկին կամ կլինիկան.

Եթե Դուք դժվարություն ունեք բժշկական կամ հոգեբուժական այցելություններին ներկայանալու հարցում, «Medi-Cal»-ը կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցով:

- բացի Սան Մաթեո շրջանից, առողջապահական ծրագրի դեղատները կտան Ձեզ անհրաժեշտ հոգեբուժական դեղերը, եթե անգամ դեղատոմսը գրված է հոգեբուժական ծրագրի հոգեբույժի կողմից, կամ կասեն Ձեզ, թե ինչպես ձեռք բերեք դեղերը «Medi-Cal»-ի սովորական դեղատնից (Սան Մաթեո շրջանում հոգեբուժական ծրագիրն ինքը կտա Ձեր դեղերը:)
- եվ Դուք առողջապահական ծրագրի անդամ չեք, հնարավոր է, որ Ձեզ սպասարկեն «Medi-Cal» ընդունող անհատ բուժաշխատողներ կամ կլինիկաներ: Բացի Սան Մաթեո շրջանից, առողջապահական ծրագրի դեղատները կտան Ձեզ անհրաժեշտ հոգեբուժական դեղերը, եթե անգամ դեղատոմսը գրված է հոգեբուժական ծրագրի հոգեբույժի կողմից, կամ կասեն Ձեզ, թե ինչպես ձեռք բերեք դեղերը «Medi-Cal»-ի սովորական դեղատնից (Սան Մաթեո շրջանում հոգեբուժական ծրագիրն ինքը կտա Ձեր դեղերը:
- առողջապահական ծրագիրը կարող է այնպիսի բժիշկ կամ կլինիկա գտնել, որն օգնություն ցույց կտա Ձեզ կամ կասի, թե ինչպես գտնել Ձեզ անհրաժեշտ բժշկին կամ կլինիկան:

Եթե Դուք դժվարություն ունեք բժշկական կամ հոգեբուժական այցելություններին ներկայանալու հարցում, «Medi-Cal»-ը կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցով:

- Երեխաների համար Ձեզ կարող է օգնել Ձեր շրջանի Մանկական առողջապահության և հաշմանդամության ծրագիրը: Կամ Դուք կարող եք դիմել Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ: Այդ հեռախոսահամարները Դուք կգտնեք Ձեր տեղական հեռախոսագրքում՝ «Շրջանի կառավարությունը» բաժնում: Դուք կարող եք նաև ինտերնետով ստանալ անհրաժեշտ տեղեկությունները՝ այցելելով visiting **www.dhs.ca.gov** հասցեն, հետո բացելով «Ծառայություններ», ապա՝ «Տեղեկություններ “Medi-Cal”-ի մասին» բաժինը:

- Չափահասների համար, Դուք կարող եք օգնություն ստանալ Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակից: Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների մասին տեղեկությունները Դուք կգտնեք Ձեր տեղական հեռախոսագրքում: Դուք կարող եք նաև ինտերնետով ստանալ անհրաժեշտ տեղեկությունները՝ այցելելով visiting **www.dhs.ca.gov** հասցեն, հետո բացելով «Ծառայություններ», ապա՝ «Տեղեկություններ “Medi-Cal”-ի մասին» բաժինը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Մանկական առողջության և հաշմանդամության ծրագիրը (CHDP)

«CHDP» ծրագիրը Կալիֆոռնիայի երեխաների և մինչև 21 տարեկան պատանիների համար նախատեսված բուժկանխարգելիչ ծրագիր է: «CHDP»-ն առողջապահական ծառայություններ է տրամադրում ոչ միայն առողջական խնդիրներ ունեցող, այլև միանգամայն առողջ թվացող երեխաներին և պատանիներին՝ կատարելով կանխարգելիչ ստուգումներ: Եթե կասկած կա, որ երեխայի կամ պատանու մոտ որևէ առողջական

խնդիր գոյություն ունի, ապա նրան ուղարկում են ախտորոշման և բուժման: Շատ առողջական խնդիրները կարելի է կանխել կամ բուժել, կամ գոնե մեղմացնել՝ եթե դրանք ժամանակին հայտնաբերվեն և անհապաղ ախտորոշվեն ու բուժվեն:

«CHDP»-ն համագործակցում է տարբեր բնագավառների բժիշկների և կազմակերպությունների լայն ցանցի հետ, որի շնորհիվ ծրագրից օգտվելու իրավունք ունեցող երեխաները և պատանիները կարող են միշտ ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները: Դրանց թվում են՝ մասնավոր բժիշկները, տեղական առողջապահական դեպարտամենտները, դպրոցները, բուժող բուժքույրերը, ատամնաբույժները, առողջապահական դաստիարակության մասնագետները, դիետբժիշկները, լաբորատորիաները, համայնքային կլինիկաները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները և սոցիալական և համայնքային ծառայությունների կազմակերպությունները: Բացի այդ՝ «CHDP»-ն կարող է օգնել ընտանիքներին՝ բժշկի այցելությունները պլանավորելու, փոխադրամիջոցների, ինչպես նաև ախտորոշման և բուժման ծառայություններ ստանալու հարցում:

«CHDP»-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ Դուք կարող եք զանգահարել տեղի առողջապահության դեպարտամենտ կամ այցելել **www.dhs.ca/gov.pcfh/cms/chdp/directory.htm** ինտերնետային էջը:

Որտեղի՞ց կարելի է տեղեկություն ստանալ

Հոգեբուժական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով Կալիֆոռնիայի հոգեբուժական դեպարտամենտի ինտերնետային էջը՝ www.dmh.ca.gov հասցեով: «Medi-Cal»-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր շրջանի իրավունքների աշխատակցին կամ այցելեք www.dhs.ca.gov/mcs/medi-calhome:

Շտապ բժշկական կամ հոգեբուժական օգնություն պահանջող իրավիճակում՝ զանգահարեք 9-1-1 կամ գնացեք ցանկացած շտապ օգնության սենյակ:

Դուք շտապ օգնության կարի՞ք ունեք

Շտապ բժշկական օգնություն պահանջող վիճակին հատուկ են այնպիսի ախտանշաններ (հնարավոր է՝ սուր ցավով ուղեկցվող), որի հետևանքով կարող է հետևյալը տեղի ունենալ.

- մարդու (իսկ հղի կնոջ դեպքում՝ սեփական և չծնված երեխայի) կյանքը կարող է լուրջ վտանգի ենթարկվել.
- օրգանիզմի գործունեության հետ կապված լուրջ խնդիրներ կարող են առաջանալ.
- կարող են լուրջ խնդիրներ կարող են առաջանալ՝ կապված որևէ օրգանի կամ դրա մի մասի հետ:

Շտապ հոգեբուժական օգնություն պահանջող իրավիճակն այն իրավիճակն է, երբ մարդը կարծում է, որ որևէ մեկը՝

- վտանգ է ներկայացնում իր կամ մեկ այլ անձի համար՝ հոգեկան հիվանդության պատճառով.
- անկարող է ուտել, հագնվել կամ տանը մնալ՝ հոգեկան հիվանդության պատճառով:

Շտապ բժշկական կամ հոգեբուժական օգնություն պահանջող իրավիճակում՝ զանգահարեք 9-1-1 կամ գնացեք ցանկացած շտապ օգնության սենյակ:

«Medi-Cal» ծրագիրը կվճարի շտապ օգնության ծառայությունները թե՛ բժշկական և թե՛ հոգեբուժական (զգացական կամ հոգեկան): Եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք, Ձեզ հաշիվ չի ներկայացվի շտապ օգնության սենյակ այցելելու համար, եթե անգամ պարզվի, որ Ձեր վիճակը շտապ օգնություն չէր պահանջում:

Եթե Դուք համոզված չեք, որ Ձեր վիճակն իսկապես շտապ օգնություն է պահանջում, կամ արդյո՞ք Ձեզ բժշկական թե՞ հոգեբուժական օգնություն է պետք, Դուք կարող եք այցելել շտապ օգնության սենյակ, որտեղ մասնագետ բժիշկը կպարզի, թե Ձեզ ինչ է հարկավոր: Եթե պարզվի, որ Ձեզ հոգեբուժական օգնություն է հարկավոր, Ձեզ հիվանդանոց կընդունեն և շտապ հոգեբուժական օգնություն կտրամադրեն: Եթե այդ հիվանդանոցում նման ծառայություն չլինի, նրանք կգտնեն անհրաժեշտ հիվանդանոցը:

Հոգեկան ճգնաժամի ժամանակ կարելի է ոչ միայն հիվանդանոց գնալ, այլև օգնություն ստանալ Ձեր շրջանի հոգեբուժական ծրագրից (ՀԾ): Եթե Դուք կարծում եք, որ օգնության կարիք ունեք, սակայն, Ձեր կարծիքով՝ հիվանդանոց գնալու կարիք չկա, կարող եք զանգահարել Ձեր ՀԾ-ի անվճար հեռախոսահամարով և օգնություն խնդրել:

Շտապ օգնության ի՞նչ տիպի ծառայություններ են տրամադրվում

«Medi-Cal»-ը վճարում է Ձեր ստացած այն շտապ օգնության ծառայությունների համար, որոնք տրամադրվում են մասնագետ բժշկի (բժշկի, հոգեբույժի, հոգեբանի կամ հոգեբուժական ծառայություններ տրամադրող որևէ այլ մասնագետի) կողմից հիվանդանոցում կամ, որպես երթևեկ հիվանդ, հիվանդանոցի շտապ օգնության սենյակում (եթե հիվանդանոցում չեք գիշերում): Այդ ծառայություններն անհրաժեշտ են շտապ օգնության կարիք ունեցող անձի վիճակը գնահատելու կամ կայունացնելու համար:

Ձեր շրջանի ՀՕ-ն պետք է Ձեզ հատուկ տեղեկություններ տրամադրի այն մասին, թե ինչ կերպ են Ձեր շրջանում տրամադրվում շտապ օգնության ծառայությունները: ՀՕ-ի կողմից վճարվող շտապ օգնության ծառայությունները ենթակա են նահանգային և դաշնային օրենքների հետևյալ պահանջներին.

- Ձեզ տրամադրած շտապ օգնության ծառայությունների դիմաց վճարում ստանալու համար՝ հիվանդանոցը պարտավոր չէ ունենալ ՀՕ-ի նախնական հավանությունը (որը երբեմն կոչվում է «նախնական արտոնություն») կամ Ձեր ՀՕ-ի հետ պայմանագիր ունենալ:
- ՀՕ-ն պարտավոր է տեղեկացնել Ձեզ, թե ինչպես կարող եք շտապ օգնություն ստանալ, այդ թվում՝ ինչպես օգտվել 9-1-1-ից:
- ՀՕ-ն պարտավոր է հայտնել Ձեզ բոլոր այն հասցեները, որտեղ տրամադրվում են շտապ օգնության կամ հետկայունացման ծառայություններ:
- Եթե կարծում եք, որ Դուք շտապ հոգեբուժական օգնության կարիք ունեք, կարող եք այցելել ցանկացած հիվանդանոց:
- Հրատապ օգնություն տրամադրող մասնագիտացված հոգեբուժական կենտրոնները բաց են շուրջօրյա, շաբաթը յոթ օր: (Հրատապ օգնություն պահանջող վիճակ է կոչվում այն հոգեկան ճգնաժամը, որը կարող է վերածվել շտապ օգնություն պահանջող վիճակի, եթե Դուք անմիջապես օգնություն չստանաք:)
- Այդ ներհիվանդանոցային ծառայությունները Դուք կարող եք ստանալ ՀՕ-ից կամավոր կերպով, եթե Ձեզ հնարավոր է անհրաժեշտ խնամք տրամադրել՝ առանց ստիպողաբար հիվանդանոցում պահելու անհրաժեշտության: Հոգեկան հիվանդներին կամավոր կամ ստիպողաբար հիվանդանոցում տեղավորելու մասին նահանգային օրենքները «Medi-Cal»-ի նահանգային կամ դաշնային կանոնակարգի մաս չեն կազմում, սակայն այդ օրենքներին մի փոքր ծանոթ լինելը կարող է կարևոր լինել Ձեզ համար:
    1. **Կամավոր տեղավորում.** նշանակում է, որ Դուք Ձեր համաձայնությունն եք տալիս հիվանդանոցում տեղավորվելու և/կամ մնալու կապակցությամբ:
    2. **Ստիպողական տեղավորում.** նշանակում է, որ հիվանդանոցը մինչև 72 ժամ կարող է պահել Ձեզ՝ առանց Ձեր համաձայնության: Դա կարող է արվել այն դեպքում, երբ

Ձեր շրջանի ՀՕ-ն պետք է վճարի ՀՕ-ի սպասարկողների ցուցակով կամ ՀՕ-ի սպասարկման տարածքում տրամադրված հետկայունացման խնամքի համար: Ձեր ՀՕ-ն կվճարի այդ ծառայությունների համար, եթե դրանք նախապես արտոնված են եղել ՀՕ-ի որևէ սպասարկողի կամ այլ ներկայացուցչի կողմից:

հիվանդանոցի աշխատակիցներն այն կարծիքի լինեն, որ Դուք կարող եք վնաս հասցնել Ձեզ կամ որևէ մեկին, կամ որ Դուք ի վիճակի չեք ինքնուրույն սնվելու, հագնվելու կամ տանը մնալու: Հիվանդանոցը Ձեզ գրավոր կերպով կհայտնի, թե ինչ քայլեր են կատարվում Ձեզ օգնություն ցույց տալու համար և որոնք են Ձեր իրավունքները: Եթե Ձեզ բուժող բժիշկները ցանկանան Ձեզ 72 ժամից ավելի պահել, Դուք իրավունք ունեք փաստաբանի դիմելու և դատական գործ հարուցելու նրանց դեմ: Հիվանդանոցը կասի Ձեզ, թե ինչպես կարելի է այդ անել:

Հետկայունացման ծառայությունները ծրագրի կողմից վճարվող այն ծառայություններն են, որոնք անհրաժեշտ են շտապ օգնությունից հետո: Այդ ծառայությունները տրամադրվում են շտապ օգնությունից հետո, երբ վիճակը կայունանում է, և նպատակ ունեն հիվանդի վիճակն ավելի բարելավելու և կայունացնելու:

Ձեր ՀՕ-ն նյութական պատասխանատվություն է կրում (պարտավոր է վճարել) կայունացված վիճակը պահպանելու, բարելավելու և բուժելու նպատակով տրամադրվող հետկայունացման ծառայությունների համար, եթե՝

- բժիշկը դիմում է ՀՕ-ին՝ նախնական հավանություն ստանալու համար և պատասխան չի ստանում 1 ժամվա ընթացքում.
- բժիշկը չի կարողանում զանգահարել ՀՕ-ին.
- ՀՕ-ի ներկայացուցիչը և բուժող բժիշկը չեն կարողանում համաձայնության գալ Ձեր խնամքի կապակցությամբ, և այդ պահին հնարավոր չէ գտնել ՀՕ-ի բժշկին՝ նրա կարծիքը հարցնելու համար: Նման իրավիճակում ՀՕ-ն պարտավոր է բուժող բժշկին ՀՕ-ի որևէ բժշկի հետ խորհրդակցելու հնարավորություն տալ: Բուժող բժիշկը կարող է շարունակել բուժումը մինչև հետկայունացման խնամքը դադարեցնելու պայմաններից որևէ մեկը կատարվի: ՀՕ-ն պետք է հոգ տանի, որպեսզի Դուք հետկայունացման խնամքի հետ կապված ոչ մի լրացուցիչ ծախս չկատարեք:

Ո՞ր դեպքերում իմ ՀՕ-ն պարտավոր չէ վճարել հետկայունացման խնամքի համար

Ձեր ՀՕ-ն պարտավոր Չէ վճարել իր կողմից նախապես չարտոնված հետկայունացման խնամքի համար, եթե

- բուժող հիվանդանոցի հետ համազոր որակավորում ունեցող ՀՕ-ի որևէ բժիշկ ստանձնում է Ձեր խնամքի պատասխանատվությունը.
- Ձեր խնամքը փոխանցվում է ՀՕ-ի որևէ բժշկի.
- ՀՕ-ի ներկայացուցիչը և բուժող բժիշկը համաձայնության են գալիս Ձեր խնամքի կապակցությամբ (ՀՕ-ի ներկայացուցիչը և Ձեր բժիշկը կգործեն իրենց միջև կայացած համաձայնության սահմաններում).
- Ձեզ դուրս են գրում (բժիշկը կամ որևէ այլ մասնագետ Ձեզ տուն է ուղարկում):

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵՑՆԵՐԸ

Ինչպե՞ս իմանամ, որ ես օգնության կարիք ունեմ

Մեզանից շատերի կյանքում դժվար պահեր են լինում, որոնց հետևանքով հոգեկան խնդիրներ են առաջանում: Այն կարծիքը կա, թե հոգեկան և զգացմունքային խանգարումները հազվադեպ երևույթներ են, սակայն իրականում, հինգ հոգուց մեկն իր կյանքի որևէ պահի որևէ հոգեկան խանգարում ունենում է: Ինչպես ցանկացած այլ հիվանդություն, հոգեկան հիվանդություններ նույնպես կարող են մի շարք պատճառներ ունենալ:

Երբ փորձում եք պարզել, թե արդյո՞ք Ձեզ մասնագետի օգնություն է հարկավոր, ամենակարևորը սեփական զգացմունքներին ապավինելն է: Եթե Դուք իրավասու եք «Medi-Cal» ստանալու և կարծում եք, որ Ձեզ մասնագիտական օգնություն է հարկավոր, ապա հարկավոր է դիմել Ձեր շրջանի ՀՕ-ին, որպեսզի ՀՕ-ն Ձեր վիճակի գնահատում կատարի և պարզի, թե արդյո՞ք Դուք իսկապես մասնագետի կարիք ունեք:

Ի՞նչ նշաններ կարող են հուշել ինձ, որ ես օգնության կարիք ունեմ

Եթե Դուք կարող եք «այո» պատասխանել ստորև նշված մեկ կամ մի քանի հարցի, ԵՎ այդ ախտանշանները շարունակվում են մի քանի շաբաթ ԵՎ դրանք զգալիորեն խանգարում են Ձեր առօրյա գործունեությանը ԵՎ այդ ախտանշանները կապված չեն ոգելից խմիչքների կամ թմրադեղերի չարաշահման հետ, այդ դեպքում, խորհուրդ է տրվում դիմել Ձեր շրջանի հոգեբուժական ծրագրին (ՀՕ):

ՀՕ-ի որևէ մասնագետ կորոշի, թե արդյո՞ք Դուք ՀՕ-ի մասնագիտացված ծառայությունների կարիք ունեք: Եթե անգամ մասնագետը որոշի, որ Դուք մասնագիտացված հոգեբուժական օգնության կարիք չունեք, Դուք կարող եք բուժում ստանալ Ձեր բժշկի կամ նախնական խնամքի բժշկի կողմից, կամ կարող եք բողոքարկել այդ որոշումը (տես էջ 29-ը):

Ձեզ կարող է օգնություն հարկավոր լինել, եթե Ձեզ մոտ առկա է հետևյալներից ՄԻ ՔԱՆԻՍԸ.

- ընկճվածություն (կամ անհույս վիճակ, անօգնականություն, անօգտակարություն կամ շատ վատ տրամադրություն) օրվա մեծ մասը՝ համարյա ամեն օր.
- հետաքրքրության կորուստ Ձեզ նախկինում հաճույք պատճառող զբաղմունքների նկատմամբ.
- մեկ ամսում ավելի քան 5% քաշի կորուստ կամ ավելացում.
- խիստ երկար քուն կամ քնի կորուստ.
- դանդաղացված կամ արագացված շարժումներ.
- հոգնածության զգացում՝ համարյա ամեն օր.
- անօգտակարության կամ մեղավորության զգացում.
- դժվարություն՝ մտածելիս, կենտրոնանալիս կամ որոշումներ ընդունելիս.

Եթե զգում եք, որ թվարկված նշաններից մի քանիսն առկա են Ձեզ մոտ և դա մի քանի շաբաթ տևում է, հավանաբար Ձեզ հարկավոր կլինի մասնագետի դիմել՝ Ձեր վիճակի գնահատման համար: Եթե համոզված չեք, հարկավոր է հարցնել Ձեր ընտանեկան բժշկի որևէ այլ բուժաշխատողի կարծիքը:

- քնելու պահանջի նվազում. մի քանի ժամ քնելուց հետո «հանգստացած» լինելու զգացում.
- արագ «սլացող» մտքեր, որոնց հետևից հասնելը Ձեզ համար դժվար է.
- շատ արագ եք խոսում և չեք կարողանում կանգ առնել.
- այնպիսի զգացում ունեք, որ «հիմա կգան Ձեզ տանելու».
- ձայներ եք լսում, որ ուրիշները չեն լսում.
- տեսնում եք այնպիսի բաներ, որ ուրիշները չեն տեսնում.
- անկարող եք աշխատանքի կամ դպրոց գնալ.
- հոգ չեք տանում Ձեր հիգիենայի (մաքրության) մասին.
- լուրջ խնդիրներ ունեք մարդկանց հետ հարաբերություններում.
- մեկուսանում կամ խուսափում եք մարդկանցից.
- հաճախ և «առանց պատճառի» լալիս եք.
- հաճախ «առանց պատճառի» բարկանում և աղմկում եք.
- տրամադրության կտրուկ փոփոխություններ են տեղի ունենում.
- համարյա անընդհատ անհանգստության զգացում ունեք.
- մարդիկ կարծում են, որ Դուք տարօրինակ կամ անսովոր վարք ունեք:

Ի՞նչ ծառայություններ են տրամադրվում

Որպես «Medi-Cal»-ի չափահաս անդամ՝ հնարավոր է, որ Դուք իրավասու լինեք ՀՕ-ի միջոցով մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու: Ձեր ՀՕ-ն պարտավոր է օգնել Ձեզ պարզելու, թե արդյո՞ք Դուք այդ ծառայությունների կարիքն ունեք: Ստորև նշված են այն ծառայություններից մի քանիսը, որոնք Ձեր շրջանի ՀՕ-ն պետք է օգնի Ձեզ ստանալ, եթե Դուք դրանց կարիքն ունեք.

Հոգեբուժական ծառայություններ, որոնք ներառում են՝ հոգեբուժական խորհրդատվությունը և բուժումը: Դրանք տրամադրվում են հոգեբույժների, հոգեբանների, հիվանդանոցի արտոնագրված սոցիալական աշխատակիցների, ամուսնության և ընտանեկան բժիշկների և հոգեբույժ-բուժքույրերի կողմից: Հոգեբուժական ծառայությունները կոչվում են նաև վերականգնման ծառայություններ: Դրանք օգնում են հոգեկան հիվանդություն ունեցող անձանց վերականգնել իրենց բնականոն առօրյա կյանքը: Հոգեբուժական ծառայությունները կարող են տրամադրվել կլինիկայում կամ սպասարկողի ընդունարանում, հեռախոսով, տանը կամ այլ պայմաններում:

- Այդ ծառայությունները կարող են միաժամանակ տրամադրվել մեկ անձի (անհատական բուժում կամ վերականգնման ծառայություններ), երկու կամ ավելի անձանց (խմբային բուժում կամ վերականգնման ծառայություններ) և ընտանիքին (ընտանեկան բուժում):

Դեղորայքի հետ կապված օգնության ծառայություններ. այս ծառայությունների մեջ մտնում են դեղատոմսի տրամադրումը, օգնությունը դեղի ընդունման հետ կապված հարցերում, հոգեմետ դեղերի բաշխումը և վերահսկումը, հոգեբույժների կողմից դեղի ընդունման կառավարումը և հոգեմետ դեղերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն ու հսկումը: Դեղորայքի հետ կապված օգնության ծառայությունները կարող են տրամադրվել կլինիկայում կամ

սպասարկողի ընդունարանում, հեռախոսով, տանը կամ այլ պայմաններում:

Նպատակային համալիր օգնություն. որն օգնում է բժշկական, տեղեկատվական, սոցիալական, նախամասնագիտական, մասնագիտական, վերականգնման կամ այլ կարգի համայնքային ծառայություններ ստանալ այն անձանց, ովքեր, հոգեկան հիվանդության պատճառով, դժվարանում են ինքնուրույն ստանալ դրանք: Նպատակային համալիր օգնությունը նախատեսում է օգնության ծրագրի մշակում, հաղորդում շահագրգիռ անձանց, համակարգում և մասնագետների մոտ այցելության ուղեգրերի տրամադրում, ծառայության տրամադրման վերահսկում՝ համոզվելու համար, որ հիվանդը ստանում է անհրաժեշտ ծառայությունները և ծառայությունների համակարգի վերահսկում, ինչպես նաև հիվանդի ապաքինման ընթացքի վերահսկում:

Ճգնաժամի մասնագիտական միջամտություն և ճգնաժամի կայունացում. այս ծառայությունները հոգեբուժական օգնություն են տրամադրում այնպիսի հոգեկան բնույթի բարդության դեպքում, որը չի կարելի հետաձգել մինչև բժշկի ընթացիկ այցելությունը: Ճգնաժամի մասնագիտական միջամտությունը կարող է տևել մինչև ութ ժամ և կարող է տրամադրվել կլինիկայում կամ սպասարկողի ընդունարանում, հեռախոսով, տանը կամ այլ պայմաններում: Ճգնաժամի կայունացումը կարող է տևել մինչև 20 ժամ և կարող է տրամադրվել կլինիկայում կամ այլ բուժկենտրոնում:

Հոգեբուժական հաստատությունում տարեցներին տրամադրվող ծառայություններ. այս հոգեբուժական ծառայությունները տրամադրվում են այն անձանց, ովքեր բնակվում են հոգեկան հիվանդների համար նախատեսված հատուկ արտոնագրված կացարաններում: Այդ ծառայությունները տրամադրվում են շուրջօրյա՝ շաբաթը յոթ օր: «Medi-Cal»-ը չի վճարում սենյակի և սննդի համար:

Տարբեր շրջաններում ՀՕ-ները կարող են այդ ծառայությունները տրամադրելու թեթևակիորեն տարբեր ընթացակարգ կիրառել, ուստի խնդրում ենք, լրացուցիչ տեղեկությունների համար կարդալ այս գրքույկի առաջին բաժինը կամ զանգահարել Ձեր ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով:

Հոգեբուժական հաստատություններում տրամադրվող ճգնաժամի բուժման ծառայություններ. այս հոգեբուժական ծառայությունները նախատեսված են այն անձանց համար, ովքեր լուրջ հոգեկան ցնցում կամ ճգնաժամ են ապրում, որը սակայն մշտական հսկողություն պահանջող բարդությունների պատճառ չի դառնում: Այդ ծառայությունները տրամադրվում են շուրջօրյա, շաբաթը յոթ օր՝ հոգեկան հիվանդների համար նախատեսված հատուկ արտոնագրված կացարաններում: «Medi-Cal»-ը չի վճարում տարեցների համար նախատեսված կացարաններում սենյակի և սննդի համար:

Ցերեկային ինտենսիվ բուժում. սա հատուկ կերպով մշակված հոգեբուժական ծրագիր է՝ նախատեսված այն անձանց համար, ովքեր այլապես ստիպված կլինեին գտնվելու հիվանդանոցում կամ շուրջօրյա բուժկենտրոնում: Ծրագիրը տևում է օրեկան առնվազն երեք ժամ: Գիշերը մարդիկ կարող են տուն գնալ: Ծրագիրը նախատեսում է հմտությունների ստեղծման միջոցառումներ (առօրյա կյանքի հմտություններ, շփում այլ մարդկանց հետ և այլն) և բուժումներ (արվեստ, հանգիստ, երաժշտություն, պար և այլն), ինչպես նաև հոգեբուժական ծառայություններ:

Վերականգնման ցերեկային ծառայություն. սա հատուկ կերպով մշակված հոգեբուժական ծրագիր է, որի նպատակն է կատարելագործել, պահպանել և վերականգնել ինքնուրույն գործելու ունակությունը: Ծրագիրն օգնում է հոգեկան հիվանդներին հմտություններ ձեռք բերել և զարգացնել: Ծրագիրը տևում է օրեկան առնվազն երեք ժամ: Գիշերը մարդիկ տուն են գնում: Ծրագիրը նախատեսում է հմտությունների ստեղծման միջոցառումներ (առօրյա կյանքի հմտություններ, շփում այլ մարդկանց հետ և այլն) և բուժումներ (արվեստ, հանգիստ, երաժշտություն, պար և այլն):

Ներհիվանդանոցային հոգեբուժական ծառայություններ. այս ծառայությունները տրամադրվում են այն հիվանդներին, որոնք հիվանդանոցում են գիշերում, քանի որ նրանք այնպիսի շտապ հոգեբուժական օգնության կամ հոգեբուժական խնամքի կարիք ունեն, որը միայն հիվանդանոցում է հնարավոր տրամադրել:

Հոգեբուժական հաստատություններում տրամադրվող ծառայություններ. այս ծառայությունները տրամադրվում են հիվանդանոցայինին նման պայմաններում, որտեղ հիվանդները գիշերում են, քանի որ նրանք այնպիսի շտապ հոգեբուժական օգնության կամ հոգեբուժական խնամքի կարիք ունեն, որը միայն հիվանդանոցայինին նման պայմաններում է հնարավոր տրամադրել: Հոգեբուժական հաստատությունը պետք է պայմանավորվածություն ունենա որևէ մոտակա հիվանդանոցի կամ կլինիկայի հետ, որպեսզի հնարավոր լինի օգնություն ցույց տալ հիվանդներին, եթե նրանք ֆիզիկական բնույթի բժշկական օգնության կարիք ունենան:

Նշված ծառայություններն ընդգրկում են նաև այն աշխատանքը, որը սպասարկողը կատարում է, որպեսզի այդ ծառայություններն ստացողը առավելագույն օգուտ քաղի դրանցից: Այդ աշխատանքը ներառում է այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ ստուգումը, համոզվելու համար, որ Դուք տվյալ ծառայության կարիքն ունեք և արդյո՞ք այն ծառայում է իր նպատակին, հոգեբուժական ծրագրի մշակումը՝ բուժման նպատակները և պահանջվող հատուկ ծառայությունները պարզելու նպատակով, «օժանդակ միջոցառումները», այսինքն՝ ընտանիքի անդամների և բուժվողի կյանքում կարևոր դեր խաղացող անձանց հետ աշխատելը (նրա թույլտվությամբ), եթե դրանից կբարելավվի նրա վիճակը կամ եթե այն կօգնի պահպանել հոգեկան առողջությունը:

Ինչպե՞ս պարզել, որ երեխան օգնության կարիք ունի



Ծնունդից մինչև 5 տարեկան երեխաների համար, գոյություն ունեն հատուկ նշաններ, որոնք կհուշեն հոգեբույժի օգնության անհրաժեշտության մասին: Դրանք են՝

- եթե ծնողներն իրենց ընկճված են զգում ծնող լինելու փաստից կամ հոգեկան խնդիրներ ունեն.
- եթե ընտանիքում հոգեկան ցնցում պատճառող որևէ դեպք է պատահել, ասենք՝ ամուսնալուծություն կամ ընտանիքի որևէ անդամ մահացել է.
- եթե ընտանիքում որևէ մեկը չարաշահում է ոգելից խմիչքները կամ թմրադեղերը.
- եթե երեխան անսովոր կամ դժվար կառավարվող վարք է դրսևորում.
- եթե ընտանիքում բռնություն կամ կռիվներ են լինում:

Եթե տանը, որտեղ մինչև 5 տարեկան երեխա է բնակվում, վերը նշված պայմաններից որևէ մեկն առկա է, հնարավոր է, որ երեխան հոգեբույժի օգնության կարիք ունենա: Հարկավոր է դիմել Ձեր շրջանի ՀՕ-ին՝ լրացուցիչ տեղեկությունների համար և պարզելու համար, թե արդյո՞ք ՀՕ-ն կարող է Ձեզ օգնել:

Ինչ վերաբերում է դպրոցական տարիքի երեխաներին, ստորև բերված հարցարանը պարունակում է որոշ նշաններ, որոնք կօգնեն Ձեզ որոշել, թե արդյո՞ք հոգեբուժական ծառայությունները կօգնեն Ձեր երեխային: Ձեր երեխան՝

- զգացմունքային և վարքի անսովոր փոփոխություններ է դրսևորում.
- ընկերներ չունի կամ բարդություններ է ունենում այլ երեխաների հետ շփվելիս.
- դպրոցում վատ է սովորում, դասերը բաց է թողնում կամ դպրոց գնալու ցանկություն չունի.
- հաճախ է թեթևակի հիվանդանում կամ վնասվածքներ ստանում.
- շատ երկյուղոտ է.
- չափազանց ագրեսիվ է.
- ոչ մի քայլ Ձեզանից չի հեռանում.
- հաճախ վատ երազներ է տեսնում.
- դժվարությամբ է քնում, գիշերն արթնանում է կամ ցանկանում է Ձեզ հետ քնել.
- հանկարծ հրաժարվում է ընտանիքի որևէ անդամի կամ որևէ ընկերոջ հետ միայնակ մնալ կամ շատ անհանգիստ է իրեն պահում՝ ընտանիքի այդ անդամի կամ ընկերոջ ներկայությամբ.
- անպատշաճ բնույթի սիրո զեղումներ է դրսևորում կամ իր տարիքին անհամապատասխան սեռական բնույթի շարժումներ կամ ակնարկներ է անում.
- հանկարծ դառնում է ընկճված կամ ջղային.
- հրաժարվում է ուտել.
- հաճախ լալիս է:

Դուք կարող եք դիմել Ձեր շրջանի ՀՕ-ին՝ Ձեր երեխայի վիճակը գնահատելու համար, եթե կարծում եք, որ նրա մոտ առկա է վերը բերված

նշաններից որևէ մեկը: Եթե Ձեր երեխան «Medi-Cal» ստանալու իրավասություն ունի, և ՀՕ-ի ստուգումը պարզի, որ նա ՀՕ-ով նախատեսված մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների կարիք ունի, ՀՕ-ն հոգ կտանի, որպեսզի երեխան ստանա այդ ծառայությունները:

Ինչպե՞ս պարզել, որ պատանին կամ երիտասարդն օգնության կարիք ունի

Պատանիները (12-18 տարեկան) պատանեկան տարիքին բնորոշ մի շարք խնդիրներ են դիմագրավում: Իսկ 18-ից 21 տարեկան երիտասարդները գտնվում են անցման շրջանում, որն ունի իր յուրահատուկ խնդիրները, և քանի որ նրանք արդեն պաշտոնապես չափահաս են, կարող են ստանալ չափահասների համար նախատեսված ծառայություններ:

Պատանու կամ երիտասարդի վարքում տեղի ունեցող որոշ արտասովոր դրսևորումներ կարող են պայմանավորված լինել նրանց օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիկական և ֆիզիոլոգիական փոփոխություններով, որոնք բնորոշ են անցման տարիքին: Չափահաս դառնալուն պես՝ պատանին փորձում է ինքնահաստատվել, նա փորձում է դուրս գալ ծնողներից կախվածության վիճակից և անկախություն ձեռք բերել: Այդ շրջանում ծնողը կամ որևէ բարեկամ, կամ հենց ինքը՝ պատանին կարող է չհասկանալ, արդյո՞ք իր վարքը «բնականոն» է և պայմանավորված է անցման շրջանի խնդիրներով, թե՞ այն վկայում է զգացական կամ հոգեկան խնդիրների մասին, որոնց համար պետք է մասնագետի դիմել:

Պարզելու համար, թե արդյո՞ք իրեն անհրաժեշտ են հոգեբուժական ծառայություններ՝ 18-ից 21 տարեկանները պետք է նայեն աջ կողմի ցուցակին և չափահասներին վերաբերող հարցերին, որոնք նշված են 13-րդ և 14-րդ էջերում:

Որոշ հոգեկան հիվանդություններ կարող են սկիզբ առնել 12-ից 21 տարեկանում: Ստորև բերված հարցարանը կօգնի Ձեզ պարզել, թե արդյո՞ք պատանին օգնության կարիք ունի: Եթե թվարկվածների մեջ մեկից ավելի նշան առկա է կամ տևում է երկար ժամանակ, դա կարող է վկայել այն մասին, որ պատանին ավելի լուրջ խնդիր ունի և հարկավոր է դիմել մասնագետի: Եթե՝

- նա խուսափում է ընտանիքից, ընկերներից կամ սովորական զբաղմունքներից.
- դպրոցում նրա առաջադիմությունն անսպասելի կերպով ընկնում է.
- նա անտեսում է նրանց ներկայությունը.
- նրա քաշը նկատելիորեն փոփոխվում է.
- նա փախչում է տանից.
- նա պոռթկուն և չափազանց ըմբոստ է դառնում.
- նրա մոտ առկա են ֆիզիկական ախտանշաններ՝ առանց որևէ նկատելի հիվանդության.
- չարաշահում է թմրադեղերը կամ ոգելից խմիչքները:

Պատանիների կամ պատանու ծնողները կամ խնամողները կարող են դիմել ՀՕ-ին, որպեսզի վերջինս գնահատում կատարի և պարզի, թե արդյո՞ք հոգեբան-մասնագետի օգնության կարիք կա: Երիտասարդները (18-ից 20 տարեկան), քանի որ նրանք արդեն չափահաս են, կարող ենք ինքնուրույն դիմել ՀՕ-ին: Եթե պատանին կամ երիտասարդն իրավասու թն «Medi-Cal» ստանալու, և ՀՕ-ի ստուգումը պարզում է, որ ՀՕ-ի կողմից վճարվող մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ են

հարկավոր, ապա ՀՕ-ն հոգ կտանի, որպեսզի պատանին կամ երիտասարդը ստանան այդ ծառայությունները:

Ի՞նչ ծառայություններ են տրամադրվում

Բոլոր այն ծառայությունները, որոնք գործում են չափահասների համար, տրամադրվում են նաև երեխաներին, պատանիների և երիտասարդներին: Դրանց թվում են՝ հոգեբուժական ծառայությունները, դեղորայքի հետ կապված օգնության ծառայությունները, նպատակային համալիր օգնությունը, ճգնաժամի մասնագիտական միջամտությունը, ճգնաժամի կայունացումը, ցերեկային ինտենսիվ բուժումը, վերականգնման ցերեկային ծառայությունը, հոգեբուժական հաստատությունում չափահասներին տրամադրվող ծառայությունները, հոգեբուժական հաստատություններում տրամադրվող ճգնաժամի բուժման ծառայությունները, ներհիվանդանոցային հոգեբուժական ծառայությունները և հոգեբուժական հաստատություններում տրամադրվող ծառայությունները: Բացի այդ, ՀՕ-ն նախատեսում է նաև հատուկ ծառայություններ՝ միայն միչև 21 տարեկան այն երեխաների, պատանիների և երիտասարդների համար որոնք իրավասու են լիարժեք «Medi-Cal» ստանալու (լիարժեք «Medi-Cal» նշանակում է, որ «Medi-Cal»-ը սահմանափակված չէ միայն որոշակի ծառայություններով, օրինակ՝ միայն շտապ օգնության ծառայություններով):

Տարբեր շրջաններում ՀՕ-ները կարող են այդ ծառայությունները տրամադրելու թեթևակիորեն տարբեր ընթացակարգ կիրառել, ուստի խնդրում ենք, լրացուցիչ տեղեկությունների համար կարդալ այս գրքույկի առաջին բաժինը կամ զանգահարել Ձեր ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով:

Հատուկ ծառայություններ գործու՞մ են երեխաների, պատանիների և երիտասարդների համար

Երեխաների, պատանիների և երիտասարդների համար ՀՕ-ով տրամադրվում են հատուկ ծառայություններ, որոնք կոչվում են «Վաղաժամ և պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» (ՎՊՍԱԲ) լրացուցիչ մասնագիտական հոգեբուժական ծառայություններ: Դրանք ներառում են «Վարքագծի բուժական ծառայություններ» (ՎԲՕ) կոչվող մի ծառայություն, որը նկարագրված է հաջորդ բաժնում: Բացի այդ, դրանք ընդգրկում են մի շարք նոր ծառայություններ, որոնք հոգեբույժ մասնագետների կողմից որակվել են որպես իսկապես օգնող ծառայություններ: Այդ ծառայությունները ՀՕ-ի միջոցով տրամադրվում են մինչև 21 տարեկան և լիարժեք «Medi-Cal» ստանալու իրավունք ունեցող այն անձանց, ովքեր ՀՕ-ի կողմից վճարվող որևէ հոգեկան հիվանդություն ունեն (ՀՕ-ի կողմից վճարվող հոգեկան հիվանդությունների մասին կարող եք կարդալ էջ 11-ում):

ՀՕ-ն պարտավոր չէ տրամադրել վերը նշված հատուկ ծառայությունները, եթե նա որոշի, որ երեխան, պատանին կամ երիտասարդը կարող է ստանալ ՀՕ-ով վճարվող սովորական ծառայություններից որևէ մեկը, և այն բավարար է նրա խնդիրը լուծելու համար: Բացի այդ, ՀՕ-ն

պարտավոր չէ այդ հատուկ ծառայությունները տրամադրել տանը կամ որևէ այլ վայրում, եթե պարզվի, որ տանը կամ որևէ այլ վայրում այդ ծառայությունների տրամադրման ընդհանուր ծախսն ավելի մեծ է, քան նման ծառայության համար պիտանի որևէ հիմնարկությունում դրանց տրամադրման ընդհանուր ծախսը:

Ի՞նչ են վարքագծի բուժական ծառայությունները (ՎԲԾ)

ՎԲԾ-ն իրենից ներկայացնում է յուրաքանչյուր շրջանի ՀԾ-ի միջոցով տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների մի տեսակ, որոնք նախատեսված են լուրջ զգացական խնդիրներ ունեցող անձանց համար: ՎԲԾ ստանալու համար հարկավոր է լինել մինչև 18 տարեկան և լիարժեք «Medi-Cal»-ից օգտվելու իրավունք ունենալ:

- Եթե Դուք ապրում եք տանը, ՎԲԾ-ի աշխատակիցը կարող է առանձին աշխատել Ձեզ հետ և օգնել, որպեսզի Դուք հաղթահարեք վարքագծի հետ կապված լուրջ խնդիրները: Դրա շնորհիվ Դուք հավանաբար այլևս կարիք չեք ունենա ավելի բարձր մակարդակի հոգեբուժական խնամքի, որի համար ստիպված կլինեիք, օրինակ՝ խիստ սուր արտահայտված զգացական խնդիրներ ունեցող երեխաների, պատանիների և երիտասարդների հանրակացարան տեղափոխվել:
- Եթե Դուք ապրում եք խիստ սուր արտահայտված զգացական խնդիրներ ունեցող երեխաների, պատանիների և երիտասարդների հանրակացարանում, ՎԲԾ-ի աշխատակիցը կարող է աշխատել Ձեզ հետ և օգնել, որպեսզի Դուք կարողանաք ավելի ցածր մակարդակի հոգեբուժական խնամք պահանջող կացարան տեղափոխվել, օրինակ՝ մանկատուն կամ պարզապես ետ՝ տուն: ՎԲԾ-ի աշխատակիցը Ձեզ և Ձեր ընտանիքին կամ խնամակալին կծանոթացնի դժվար վարքը վերահսկելու նոր միջոցներին և կբացատրի, թե ինչ ձևով կարելի է ամրապնդել այն վարքը, որը Ձեզ համար հաջողություն կապահովի: Դուք, ՎԲԾ-ի աշխատակիցը և Ձեր ընտանիքը կամ խնամակալը մի կարճ ժամանակ բավականին լարված կաշխատեք միասին, մինչև Դուք այլևս ՎԲԾ-ի աշխատակցի օգնության կարիքը չունենաք: Ձեզ ՎԲԾ-ի ծրագիր կտրվի, որտեղ կասվի, թե ՎԲԾ-ի ընթացքում ինչ պետք է անեք Դուք, Ձեր ընտանիքը կամ խնամակալը և ՎԲԾ-ի աշխատակիցը, ինչպես նաև երբ և որտեղ է անցկացվելու ՎԲԾ-ն: ՎԲԾ-ի աշխատակիցը կարող է Ձեզ հետ աշխատել համարյա այն բոլոր վայրերում, որտեղ հավանական է, որ Դուք վարքի հետ կապված օգնության կարիք ունենաք, այդ թվում՝ տանը, մանկատանը, հանրակացարանում, դպրոցում, ցերեկային բուժման վայրում և այլ վայրերում:

Ո՞վ կարող է ՎԲԾ ստանալ

Դուք կարող եք ՎԲԾ ստանալ, եթե լիարժեք «Medi-Cal»-ի իրավունք ունեք, 21 տարեկան չկաք, լուրջ զգացական բնույթի խնդիրներ ունեք ԵՎ

- ապրում եք խիստ սուր արտահայտված զգացական խնդիրներ ունեցող երեխաների, պատանիների և երիտասարդների հանրակացարանում: [Այդ հանրակացարանները երբեմն կոչում են 12, 13 կամ 14 կարգի դասակարգման մակարդակի (ԿԴՄ) հանրակացարաններ] ԿԱՄ
- գտնվում եք նահանգային հոգեբուժարանում, հոգեբուժական ծառայությունների մասնագիտացված կացարանում, հոգեբուժական վերականգնման կենտրոնում (այդ վայրերը կոչվում են նաև հոգեկան հիվանդությունների հաստատություններ կամ ՀՀՀ-ներ) ԿԱՄ
- հանրակացարան (ԿԴՄ 12, 13 կամ 14), հոգեբուժարան կամ ՀՀՀ տեղափոխվելու վտանգ կա Ձեզ համար ԿԱՄ
- հիվանդանոց եք տարվել վերջին 2 տարվա ընթացքում՝ շտապ օգնություն պահանջող հոգեբուժական խնդրի պատճառով:

Որևէ այլ բան հարկավո՞ր է ՎԲԾ ստանալու համար

Այո: Դուք ՎԲԾ կարող եք ստանալ միայն այն դեպքում, երբ արդեն մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ եք ստանում: ՎԲԾ-ն ոչ թե առանձին է տրամադրվում, այլ հանդիսանում է լրացուցիչ ծառայություն՝ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների համար: Այն չի փոխարինում այդ ծառայությունները: Քանի որ ՎԲԾ-ն կարճատև ծառայություն է, Ձեզ կարող են անհրաժեշտ լինել այլ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ, որպեսզի ՎԲԾ-ից հետո Ձեր ունեցած խնդիրը չկրկնվի կամ ավելի չվատթարանա:

ՎԲԾ-ն ՉԻ տրամադրվում այն դեպքում, եթե այն անհրաժեշտ է՝

- միայն օգնելու համար, որպեսզի փորձնական ժամկետի վերաբերյալ դատարանի հրամանն ի կատար ածվի.
- միայն Ձեր կամ այլ անձանց ֆիզիկական ապահովությունը պաշտպանելու համար.
- միայն Ձեր ընտանիքի, խնամակալի կամ ուսուցիչների հոգսը թեթևացնելու համար.
- միայն օգնելու համար այնպիսի վարքի դեպքում, որը պայմանավորված չէ հոգեկան խանգարումներով:

Դուք չեք կարող ՎԲԾ ստանալ, եթե գտնվում եք հոգեբուժական հիվանդանոցում, ՀՀՀ-ում կամ անչափահասների ուղղիչ հաստատությունում, ինչպես օրինակ անչափահասների աշխատանքային գաղութում: Սակայն, եթե Դուք գտնվում եք հոգեբուժական հիվանդանոցում կամ ՀՀՀ-ում, հնարավոր է, որ Դուք կարողանաք ավելի վաղ դուրս գալ հոգեբուժական հիվանդանոցից կամ ՀՀՀ-ից, քանի որ ՎԲԾ-ն կարող է ավելացվել այլ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններին և օգնել Ձեզ մնալ ավելի ցածր մակարդակի

հոգեբուժական խնամք պահանջող վայրում (տանը, մանկատանը կամ հանրակացարանում):

Ինչպե՞ս ՎԲՇ ստանամ

Եթե կարծում եք, որ Դուք ՎԲՇ-ի կարիք ունեք, հարցրեք Ձեր հոգեբույժին, բժշկին կամ բուժումը կազմակերպողին, թե արդյո՞ք Դուք արդեն նման ծառայություն չեք ստանում կամ զանգահարեք ՀՇ և խնդրեք Ձեզ տրամադրել այդ ծառայությունները: Ձեր ընտանիքի որևէ անդամ, խնամակալը, խորհրդատուն կամ սոցիալական աշխատողը կարող է զանգահարել և հարցնել, թե ինչ ՎԲՇ կամ այլ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ կարող եք Դուք ստանալ: Դուք կարող եք նաև ինքներդ զանգահարել ՀՇ և հարցնել ՎԲՇ-ի մասին:

Ո՞վ է որոշում, թե արդյո՞ք ես ՎԲՇ-ի կարիք ունեմ և որտեղ կարող եմ ստանալ ծառայությունները

ՀՇ-ն է որոշում, թե արդյո՞ք Դուք մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների, ներառյալ ՎԲՇ-ի կարիք ունեք: Սովորաբար ՎԲՇ-ի որևէ աշխատակից կխոսի Ձեր Ձեզ, Ձեր ընտանիքի որևէ անդամի, խնամակալի կամ Ձեր կյանքում կարևոր դեր խաղացող որևէ այլ անձի հետ և կկազմի Ձեզ անհրաժեշտ բոլոր հոգեբուժական ծառայությունների, այդ թվում ՎԲՇ-ի ծրագիրը, եթե այն անհրաժեշտ լինի: Դրա կարող է մեկ կամ երկու անձնական հանդիպում պահանջվել, երբեմն՝ ավելին: Եթե պարզվի, որ Դուք ՎԲՇ-ի կարիք ունեք, Ձեզ ՎԲՇ-ի որևէ աշխատակից կկցվի:

Ի՞նչ պետք է պարունակի ՎԲՇ-ի ծրագիրը

Ձեր ՎԲՇ-ի ծրագրում կնշվի այն վարքագիծը, որի վրա պետք է աշխատել և կբացատրվի, թե ինչ պետք է անեք Դուք, ՎԲՇ-ի աշխատակիցը, իսկ երբեմն նաև Ձեր ընտանիքը կամ խնամակալը ՎԲՇ-ի ընթացքում: Ծրագրում նաև կնշվի, թե օրեկան քանի ժամ և շաբաթական քանի օր պետք է ՎԲՇ-ի աշխատակիցն աշխատի Ձեզ և Ձեր ընտանիքի կամ խնամակալի հետ: Ժամերը կարող են լինել ցերեկը, վաղ առավոտյան, երեկոյան կամ գիշերը: Օրերը կարող են լինել հանգստյան կամ աշխատանքային օրերը: Ծրագրում կնշվի նաև, թե որքան կտևի ՎԲՇ-ն: ՎԲՇ-ի ծրագիրը պարբերաբար կթարմացվի: ՎԲՇ-ն կարող է նախատեսվածից ավելի երկար տրամադրվել, եթե պարզվի, որ Դուք հաջողություններ ունեք, սակայն Ձեզ ավելի շատ ժամանակ է հարկավոր:

Ի՞նչ է «բժշկական անհրաժեշտությունը» և ինչու՞ է այն կարևոր

Ձեր ՀՕ-ի միջոցով մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու անհրաժեշտ պայմաններից մեկը՝ այսպես կոչված «բժշկական անհրաժեշտությունն» է: Դա նշանակում է, որ բժիշկը կամ որևէ այլ մասնագետ հոգեբույժ զրույց կունենա հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք դուք բժշկական առումով ծառայություններ ստանալու անհրաժեշտություն ունեք և արդյո՞ք դրանք կօգնեն Ձեզ:

«Բժշկական անհրաժեշտություն» տերմինը կարևոր է, քանի որ դրա օգնությամբ է որոշվում, թե ինչ տիպի ծառայություններ եք Դուք ստանալու և ինչպես: «Բժշկական անհրաժեշտությունը» որոշելը մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների տրամադրման գործընթացի շատ կարևոր մասերից մեկն է:

Ի՞նչ չափանիշներով է որոշվում «բժշկական անհրաժեշտությունը» մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու համար՝ բացի հիվանդանոցի ծառայություններից

Ինչպես ասվեց վերը, որոշելու համար, թե արդյո՞ք Դուք մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների կարիք ունեք, Ձեր շրջանի ՀՕ-ն կաշխատի Ձեզ և Ձեր սպասարկողի հետ և կպարզի, թե արդյո՞ք այդ ծառայությունները տրամադրելու «բժշկական անհրաժեշտություն» կա: Այս բաժնում բացատրվում է, թե ինչպես է ՀՕ-ն կայացնում իր որոշումը:

Օգնություն ստանալու համար Դուք կարիք չունեք իմանալու, թե արդյո՞ք Ձեզ որևէ ախտորոշում է կատարվել կամ Դուք որևէ հատուկ հոգեկան հիվանդություն ունեք: Ձեր շրջանի ՀՕ-ն կկատարի Ձեր վիճակի «գնահատում» և կհայտնի Ձեզ այդ մասին: Կա մի քանի պայման, որոնց վրա հիմնվում է ՀՕ-ն՝ որոշելու համար, թե արդյո՞ք Ձեր ստացած ծառայությունների «բժշկական անհրաժեշտություն» կա և դրանք պետք է վճարվեն ՀՕ-ի կողմից:

(1) ՀՕ-ն պետք է Ձեզ ստորև նշված հոգեկան հիվանդություններից որևէ մեկն ախտորոշած լինի, ինչպես սահմանված է Ամերիկյան հոգեբուժական ընկերակցության կողմից հրատարակված «Ախտորոշման և վիճակագրական ուղեցույցի», չորրորդ հրատարակության մեջ.

- զարգացման հետ կապված աճող խանգարումներ՝ բացառությամբ աուտիզմի հետ կապված խանգարումներից.
- վտանգավոր վարքի կամ ուշադրությունը կենտրոնացնելու հետ կապված խանգարումներ.
- կերակրվելու կամ ուտելու հետ կապված ծծկեր տարիքի կամ վաղ մանկական խանգարումներ.
- բացառման խանգարումներ.
- ծծկեր տարիքի, մանկական կամ պատանեկան այլ խանգարումներ
- շիզոֆրենիա կամ այլ պսիխոտիկ խանգարումներ.

Օգնություն ստանալու համար Դուք կարիք չունեք իմանալու, թե արդյո՞ք Ձեզ որևէ ախտորոշում է կատարվել կամ Դուք որևէ հատուկ հոգեկան հիվանդություն ունեք:

- տրամադրության հետ կապված խանգարումներ.
- տագնապալից վիճակների հետ կապված խանգարումներ.
- սոմատոտիպ խանգարումներ.
- արհեստական խանգարումներ.
- մարդատյացության հետ կապված խանգարումներ.
- պարաֆիլիա.
- սեռական պատկանելիության հետ կապված խանգարումներ.
- ուտելու հետ կապված խանգարումներ.
- գործողությունների մղման հետ կապված խանգարումներ, որոնք ընդգրկված չեն այլուր.
- կանոնավորման հետ կապված խանգարումներ.
- անհատականության հետ կապված խանգարումներ՝ բացի հակասոցիալական անհատականության հետ կապված խանգարումներից.
- դեղերով պայմանավորված շարժումների խանգարումներ՝ որոնք կապված են նշված այլ խանգարումների հետ.

Եթե Դուք չեք համապատասխանում նշված չափանիշներին, դա չի նշանակում, որ Դուք չեք կարող օգնություն ստանալ: Դուք կարող եք օգնություն ստանալ «Medi-Cal»-ի Ձեր ընդհանուր բժշկից կամ ընդհանուր «Medi-Cal» ծրագրով:

ԵՎ

(2) ախտորոշումը պետք է ցույց տա, որ Դուք ունեք հետևյալ խնդիրներից գոնե մեկը.

- զգալի դժվարություններ՝ կենսագործունեության որևէ կարևոր ոլորտում.
- կենսագործունեության որևէ կարևոր ոլորտում Ձեր վիճակի զգալի վատթարացման հնարավորություն.
- բացի այն դեպքերից, որոնք նշված են մինչև 21 տարեկան անձանց համար, լուրջ հավանականություն, որ երեխայի անհատականությունը պատշաճ կերպով չի զարգանա.

ԵՎ

(3) **ակնկալվում է, որ առաջարկվող բուժումը՝**

- զգալիորեն կնվազեցնի խնդիրը.
- կկանխի զգալի վատթարացումը կենսագործունեության կարևոր ոլորտում.
- կօգնի ինչպես հարկն է զարգացնել երեխայի անհատականությունը.

ԵՎ

(4) Ձեր վիճակը չի ենթարկվում սովորական ոչ հոգեբուժական բուժման:

Եթե «բժշկական անհրաժեշտության» այս բաժնի պահանջները համապատասխանում են Ձեր վիճակին, Դուք իրավասու եք ՀՕ-ից հատուկ հոգեբուժական ծառայություններ ստանալու:

Ի՞նչ չափանիշներով է որոշվում «բժշկական անհրաժեշտությունը»՝ մինչև 21 տարեկաններին տրամադրվող մասնագիտական հոգեբուժական ծառայությունների ծախսը փոխհատուցելու համար

Եթե Դուք դեռ 21 տարեկան չկաք, իրավասու եք լիարժեք «Medi-Cal»-ի և Ձեզ ախտորոշվել է վերը՝ (1) կետում նշված հիվանդություններից որևէ մեկը, սակայն Դուք չեք համապատասխանում (2) և (3) կետերում նշված պահանջներին, ապա ՀՕ-ն պետք է աշխատի Ձեզ և Ձեր սպասարկողի հետ, պարզելու համար, թե արդյո՞ք հոգեբուժական ծառայությունը կբուժի կամ կբարելավի Ձեր հոգեկան առողջությունը: Եթե պարզվի, որ ՀՕ-ով վճարվող ծառայությունները կբուժեն կամ կբարելավեն Ձեր վիճակը, ապա ՀՕ-կ կտրամադրի Ձեզ այդ ծառայությունները:

Եթե Դուք այդ հիվանդանոցային ծառայությունների կարիքն ունեք, ՀՕ-ն կվճարի Ձեր հիվանդանոց ընդունվելու ծախսը, եթե Ձեր վիճակը համապատաս-խանեք «բժշկական անհրաժեշտու-թյան» պայմաններին:

Ի՞նչ չափանիշներով է որոշվում «բժշկական անհրաժեշտությունը»՝ հոգեբուժական հիվանդանոցում գտնվելու ծախսը փոխհատուցելու համար

Ձեր բուժման «բժշկական անհրաժեշտությունը» որոշելն այն միջոցներից մեկն է, որով Ձեր ՀՕ-ն պարզում է, թե արդյո՞ք Դուք գիշերը հիվանդանոցում անցկացնելու կարիք ունեք: Եթե Ձեզ բժշկական առումով անհրաժեշտ է գիշերը հիվանդանոցում մնալ, այդ դեպքում Ձեր ՀՕ-ն կվճարի հիվանդանոցում մնալու ծախսը: Այս որոշումը կայացնելու համար անհրաժեշտ կլինի Ձեր վիճակի գնահատում կատարել:

Երբ Ձեր ՀՕ-ն կամ ՀՕ-ի սպասարկողը նախատեսում է Ձեզ հիվանդանոց ընդունել, նախքան հիվանդանոցում տեղավորվելը՝ ՀՕ-ն կորոշի դրա բժշկական անհրաժեշտությունը: Ավելի հաճախ մարդիկ հիվանդանոց են գնում շտապ օգնության անհրաժեշտության դեպքում, այդ այդ ժամանակ ՀՕ-ն և հիվանդանոցը միասին որոշում են դրա բժշկական անհրաժեշտությունը: Եթե Դուք հիվանդանոց եք գնում շտապ օգնության անհրաժեշտության դեպքում, ապա կարիք չկա մտածելու այն մասին, թե արդյո՞ք բժշկական Ձեր ստացած ծառայությունները բժշկական առումով անհրաժեշտ են (այն մասին, թե ինչպես են վճարվում շտապ օգնության անհրաժեշտության դեպքում ստացված ծառայությունները, կարող եք կարդալ «Կալիֆոռնիայի նահանգ» բաժնում, էջ 8):

Դուք հոգեկան հիվանդություն կամ հոգեկան հիվանդության ախտանշաններ ունեք, Ձեր հիվանդությունը կամ ախտանշանները հնարավոր չէ բուժել ավելի ցածր մակարդակով և այդ հիվանդության կամ ախտանշանների պատճառով Դուք՝

- վտանգ եք ներկայացնում Ձեզ կամ այլ անձանց համար, կամ կարող եք զգալի վնաս հասցնել գույքին.
- չեք կարողանում ուտել, հագնվել կամ տանը մնալ.
- կարող եք լուրջ առողջական խնդիր ունենալ.
- վերջերս կենսագործունեության զգալի վատթարացում եք ունեցել

- հոգեբուժական գնահատման, դեղերով բուժման կամ այնպիսի մի բուժման կարիք ունեք, որը միայն հիվանդանոցում է հնարավոր ստանալ:

Ձեր շրջանի ՀԾ-ն կվճարի հոգեբուժական հիվանդանոցում ավելի երկար գտնվելու համար, եթե Ձեզ մոտ առկա է հետևյալներից որևէ մեկը.

- մշտական «բժշկական անհրաժեշտություն»՝ վերը նշված չափանիշներով.
- լուրջ բացասական հակազդեցություն՝ դեղերի, միջոցառումների կամ բուժումների նկատմամբ, որը պահանջում է, որ Դուք շարունակեք հիվանդանոցում մնալ.
- նոր բարդություններ, որոնք համապատասխանում են բժշկական անհրաժեշտության չափանիշներին.
- այնպիսի մշտական հոգեբուժական գնահատման կամ բուժման անհրաժեշտություն, որը միայն հիվանդանոցում է հնարավոր ստանալ:

Ձեր շրջանի ՀԾ-ն կարող է Ձեզ հոգեբուժական հիվանդանոցից ազատելու ցուցում տալ, երբ Ձեր բժիշկն ասի, որ Ձեր վիճակը կայունացել է: Դա նշանակում է, որ, բժշկի կարծիքով, Ձեր վիճակը չի վատթարանա, եթե Դուք դուրս գրվեք հիվանդանոցից:

Ի՞նչ է ծանուցագիրը

Ծանուցագիրը մի ձև է, որի օգնությամբ Ձեր շրջանի հոգեբուժական ծառայությունը (ՀՇ) հայտնում է Ձեզ իր որոշման մասին այն կապակցությամբ, թե արդյո՞ք դուք ստանալու եք «Medi-Cal»-ի մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ, թե՞ ոչ: Ծանուցագրի օգնությամբ Ձեզ տեղեկացվում է նաև այն մասին, որ հնարավոր չի եղել ժամանակին որոշում ընդունել Ձեր գանգատի, բողոքարկման սովորական կամ արտահերթ դիմումի կապակցությամբ կամ ծառայությունների տրամադրման ՀՇ-ով գործող ժամկետներում հնարավոր չի եղել Ձեզ սպասարկել:

Ե՞րբ ես ծանուցագիր կստանամ

Դուք ծանուցագիր կստանաք՝

- եթե Ձեր ՀՇ-ն կամ ՀՇ-ի սպասարկողներից որևէ մեկը որոշի, որ Դուք չեք կարող «Medi-Cal»-ի որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունից օգտվել, քանի որ Ձեր վիճակը չի համապատասխանում բժշկական անհրաժեշտության չափանիշներին: Բժշկական անհրաժեշտության մասին կարող եք կարդալ էջ 21-ում.
- եթե Ձեր սպասարկողը կարծում է, որ Դուք որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայության կարիք ունեք և դիմում է ՀՇ-ին՝ այդ կապակցությամբ նրա հավանությունն ստանալու համար, սակայն ՀՇ-ն հավանություն չի տալիս և մերժում է Ձեր սպասարկողի դիմումը, կամ փոխում է ծառայությունը ստանալու հաճախականությունը: Հիմնականում ծանուցագիրը Ձեզ կուղարկվի ծառայությունը ստանալուց առաջ, սակայն երբեմն ծանուցագիրը կարող է տեղ հասնել այն ժամանակ երբ Դուք արդեն ստացել եք կամ դեռ ստանում եք ծառայությունը: Եթե Դուք ծանուցագիրը ստանաք ծառայությունը ստանալուց հետո, Դուք պարտավոր չեք վճարել ծառայության համար.
- եթե Ձեր սպասարկողը դիմել է ՀՇ-ին՝ նրա հավանությունը ստանալու համար, բայց որոշում կայացնելու համար ՀՇ-ին լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր և որոշումը ժամանակին չի կայացվում.
- եթե ՀՇ-ն իր կողմից որոշված ժամկետներում Ձեզ ծառայություններ չի տրամադրում: Պարզելու համար, թե արդյո՞ք ՀՇ-ն ժամկետներ սահմանել է, զանգահարեք Ձեր շրջանի ՀՇ.
- Եթե Դուք գանգատ եք ներկայացնում ՀՇ-ին, և ՀՇ-ն 60 օրվա ընթացքում չի պատասխանում Ձեզ: Գանգատ ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ տես էջ 36-ը:
- Եթե Դուք բողոքարկում եք ՀՇ-ի որոշումը և ՀՇ-ն 45 օրվա ընթացքում չի պատասխանում Ձեզ, իսկ բողոքարկման արտահերթ դիմումի դեպքում՝ երեք օրվա ընթացքում: Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ տես էջ 29-ը:

Ինձ միշտ ծանուցագիր կուղարկվի՞, եթե ես չստանամ ինձ անհրաժեշտ ծառայությունները

Կան դեպքեր, երբ Ձեզ ծանուցագիր չի ուղարկվի: Եթե Դուք և Ձեր սպասարկողը չհամաձայնեք ստանալ այն ծառայությունները որի կարիքը Դուք ունեք, ապա ՀՕ-ն Ձեզ ծանուցագիր չի ուղարկի: Եթե Դուք կարծում եք, որ ՀՕ-ն անհրաժեշտ արագությամբ չի տրամադրում ծառայությունները, բայց ՀՕ-ն դրանց համար ժամկետներ սահմանած չլինի, Դուք ծանուցագիր չեք ստանա:

Սակայն այդ դեպքում Դուք դեռ իրավունք ունեք բողոքարկել ՀՕ-ի որոշումը կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել: Բողոքարկելու կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու մասին տեղեկությունները կարող եք կարդալ այս գրքույկում, 26-րդ էջից սկսած:

Գանգատների, բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության վերաբերյալ՝ խնդրում ենք կարդալ այս գրքույկի հաջորդ բաժինը, որը վերնագրված է «Խնդիրների լուծման ընթացակարգերը»:

Ի՞նչ տեղեկություններ կպարունակի ծանուցագիրը

Ծանուցագրում կպարունակվեն հետևյալ տեղեկությունները.

- ինչ է արել Ձեր շրջանի ՀՕ-ն, որն ազդում է Ձեզ և ծառայություններ ստանալու Ձեր հնարավորության վրա.
- որոշման ուժի մեջ մտնելու օրը, և ինչ պատճառով է ՀՕ-ն ընդունել այդ որոշումը.
- ինչ նահանգային կամ դաշնային օրենքների հիման վրա է ՀՕ-ն ընդունել իր որոշումը.
- ինչ իրավունքներ ունեք Դուք, եթե համաձայն չեք ՀՕ-ի ընդունած որոշման հետ.
- ինչպես բողոքարկել ՀՕ-ի որոշումը.
- ինչպես նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել.
- ինչպես բողոքարկման կամ անկողմնակալ վերաքննության արտահերթ դիմում ներկայացնել.
- ինչպես օգնություն ստանալ բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու հարցում.
- որքան կտևի բողոքարկումը կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելը.
- արդյոք Դուք իրավունք ունեք շարունակելու ստանալ ծառայությունները՝ մինչ սպասում եք նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը.
- երբ է հարկավոր ուղարկել նահանգային անկողմնակալ վերաքննության հայցը, եթե ցանկանում եք շարունակել ստանալ ծառայությունները:

Ի՞նչ է հարկավոր անել ծանուցագիր ստանալիս

Ծանուցագիր ստանալիս հարկավոր է ուշադրությամբ կարդալ նրանում պարունակվող ողջ տեղեկությունը: Եթե այն Ձեզ հասկանալի չէ, Ձեր ՀՕ-ն կարող է օգնել Ձեզ: Դուք կարող եք նաև որևէ մեկին խնդրել օգնել Ձեզ:

Եթե ծանուցագրի մեջ ասվում է, որ Դուք կարող եք շարունակել ստանալ ծառայությունները՝ մինչ սպասում եք նահանգային անկողմնակալ

վերաքննության որոշմանը, ապա Դուք պետք է նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջեք 10 օրվա ընթացքում՝ սկսած այն պահից երբ ծանուցագիրը փոստով ուղարկվել կամ անձամբ հանձնվել է Ձեզ կամ, եթե ծանուցագիրը Ձեզ է ուղարկվել ծառայության մեջ փոփոխություն կատարելու որոշման ուժի մեջ մտնելուց ավելի քան 10 օր առաջ, ապա նահանգային անկողմնակալ վերաքննության հայցը պետք է ներկայացվի նախքան որոշման ուժի մեջ մտնելը:

Ի՞նչ անել, եթե ես իմ ուզած ծառայությունները չեմ ստանում իմ ՀՕ-ից

Ձեր շրջանի ՀՕ-ն Ձեզ հնարավորություն է տալիս լուծել Ձեզ տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների հետ կապված ցանկացած հարց: Դա արվում է խնդիրների լուծման ընթացակարգի միջոցով, որը նախատեսում է հետևյալը՝

1. **բողոքարկում**. ՀՕ-ի կամ Ձեր սպասարկողի կողմից Ձեզ տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայության վերաբերյալ որոշման (ծառայությունը մերժելու կամ նրանում փոփոխություն կատարելու մասին) վերանայումը.
2. **նահանգային անկողմնակալ վերաքննություն**. վերաքննություն՝ պարզելու համար, թե արդյո՞ք դուք ստանում եք այն հոգեբուժական ծառայությունները, որոնք Ձեզ հասնում են «Medi-Cal» ծրագրով.
3. **գանգատ**. Ձեր դժգոհության արտահայտումը՝ Ձեզ տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների հետ առնչվող որևէ հարցի կապակցությամբ, որը հնարավոր չէ լուծել բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության միջոցով:

Ձեր ՀՕ-ն ծառայությունների տրամադրման բոլոր վայրերում ունի գանգատի և բողոքարկման դիմումների ձևերը և հետադարձ հասցեով ծրարներ, որոնք Դուք կարող եք վերցնել, և Դուք ստիպված չեք որևէ մեկին խնդրել, որպեսզի այն բերի Ձեզ համար: Բացի այդ՝ ծառայությունների տրամադրման բոլոր վայրերում Ձեր շրջանի ՀՕ-ն պետք է պատերին փակցնի տեղեկանք այն մասին, թե ինչպես կարելի է բողոքարկման դիմում կամ գանգատ ներկայացնել և անվճար թարգմանչական ծառայություններ ու անվճար հեռախոսագիծ ունենա, որոնցից Դուք կարող եք օգտվել աշխատանքային ժամերին:

Դուք ոչ մի պատիժ չեք կրի՝ բողոքարկման, գանգատի կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու համար: Երբ ավարտվի Ձեր ներկայացրած բողոքարկման կամ գանգատի քննությունը, Ձեր շրջանի ՀՕ-ն Ձեզ և այդ գործընթացի մեջ ներգրավված այլ անձանց կտեղեկացնի վերջնական արդյունքի մասին: Դատալսման ավարտից հետո նահանգային անկողմնակալ վերաքննության գրասենյակը Ձեզ և այդ գործընթացի մեջ ներգրավված այլ անձանց կտեղեկացնի վերջնական արդյունքի մասին:

Ես կարո՞ղ եմ օգնություն ստանալ բողոքարկման դիմում, գանգատ կամ նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնելու հարցում

Ձեր շրջանի ՀՕ-ն աշխատակիցներ ունի, որոնք կարող են բացատրել Ձեզ այդ ընթացակարգերը և օգնել Ձեզ բողոքարկման դիմում, գանգատ կամ նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնելու հարցում: Նրանք նաև կօգնեն Ձեզ պարզել, թե արդյո՞ք Դուք իրավասու եք Ձեր գործի այսպես կոչված «արտահերթ» քննարկման: Դա նշանակում է, որ Ձեր գործն ավելի արագ կնայվի, քանի որ Ձեր առողջությունը կամ առողջական վիճակի կայունությունը վտանգված են: Դուք կարող եք նաև լիազորել որևէ այլ անձի Ձեր անունից հանդես գալու, այդ թվում՝ Ձեր հոգեբույժին:

Ի՞նչ անել, եթե ես օգնության կարիք ունեմ որևէ խնդիր լուծելու համար, սակայն չեմ ցանկանում գանգատ կամ բողոքարկման դիմում ներկայացնել

Եթե Դուք դժվարանում եք Ձեր ՀՕ-ում գտնել մեկին, որը կօգնի Ձեզ ՀՕ-ի ընթացակարգերով որևէ խնդիր լուծելու հարցում, Դուք կարող եք դիմել Նահանգի օգնությանը: Նահանգում գործում է հոգեբուժական օմբուդսմանի ծառայությունների ծրագիր, որը կարող է Ձեզ տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես է գործում ՀՕ-ն, բացատրել Ձեր իրավունքները և ընտրության տարբերակները, օգնել Ձեզ անհրաժեշտ ծառայությունները ստանալու հարցում կամ ուղարկել Ձեզ Ձեր ՀՕ-ի կամ համայնքի այն անձանց մոտ, ովքեր կարող են օգնել Ձեզ:

Նահանգի հոգեբուժական օմբուդսմանի ծառայությունների ծրագրին կարելի է դիմել՝ զանգահարելով (800) 896-4042 հեռախոսահամարով (տրամադրվում են թարգմանչական ծառայություններ) կամ TTY գծով՝ (800) 896-2512, ֆաքս ուղարկելով (916) 653-9194 համարով կամ էլ. փոստով, հասցե՝ ombudsmn@dmhhq.state.ca.us:

Ձեր ՀՇ-ն պարտավոր է Ձեզ հնարավորություն տալ պահանջելու, որպեսզի վերանայվի ՀՇ-ի կամ Ձեր սպասարկողի կողմից Ձեզ տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների կապակցությամբ ընդունված որոշումը: Որոշումը բողոքարկելու երկու եղանակ կա: Առաջինը սովորական բողոքարկումն է: Երկրորդ եղանակը հարցի շտապ կամ արտահերթ քննարկման պահանջն է: Բողոքարկման կարգը երկու դեպքում էլ միանման է, սակայն բողոքարկման արտահերթ դիմում ներկայացնելու իրավունք ունենալու համար հատուկ պահանջներ են գործում, որոնք նշված են ստորև:

Ի՞նչ է սովորական բողոքարկումը

Սովորական բողոքարկումը ՀՇ-ի կամ Ձեր սպասարկողի կողմից ընդունված այնպիսի մի որոշում վերանայելու պահանջ է, որով մերժվում կամ փոխվում է Ձեր կարծիքով Ձեզ անհրաժեշտ մի ծառայություն: Եթե Դուք սովորական բողոքարկման դիմում եք ներկայացնում, ՀՇ-ն կարող է հարցը քննարկել 45 օրվա ընթացքում: Եթե Դուք կարծում եք, որ 45 օր սպասելը բացասաբար կանդրադառնա Ձեր առողջության վրա, Դուք պետք է «բողոքարկման արտահերթ դիմում» ներկայացնեք:

Սովորական բողոքարկման կարգը՝

- Ձեզ թույլ է տալիս ներկայացնել բողոքարկման դիմումը անձամբ, հեռախոսով կամ գրավոր կերպով: Եթե Դուք բողոքարկման դիմումը ներկայացնեք անձամբ ՀՇ գնալով կամ հեռախոսով, ապա անհրաժեշտ է դրանից հետո նաև գրավոր դիմում ներկայացնել: Եթե Դուք գրավոր դիմում չներկայացնեք, Ձեր բողոքարկման դիմումը չի քննարկվի: Սակայն բողոքարկման դիմում ներկայացնելու օրը համարվում է այն օրը, երբ Դուք բանավոր կերպով հայտնում եք այդ մասին.
- երաշխավորում է, որ բողոքարկումը ոչ մի կերպ չի անդրադառնա Ձեր կամ Ձեր սպասարկողի դեմ.
- Ձեզ թույլ է տալիս լիազորել մեկ այլ անձի, այդ թվում, Ձեր սպասարկողին, հանդես գալ Ձեր անունից: Եթե Դուք որևէ այլ անձի լիազորեք հանդես գալ Ձեր անունից, հնարավոր է, որ ՀՇ-ն Ձեզանից պահանջի հատուկ թերթիկ ստորագրել, որով Դուք ՀՇ-ին լիազորում եք այդ անձին տեղեկություններ տրամադրել.
- ապահովում է, որ բողոքարկման կապակցությամբ որոշում կայացնողներն այդ անելու իրավասություն ունենան և նախկին վերանայման կամ որոշման գործընթացի որևէ փուլին մասնակցած չլինեն.
- Ձեզ կամ Ձեր ներկայացուցչին հնարավորություն է տալիս ծանոթանալու Ձեր գործին, այդ թվում՝ Ձեր հիվանդության պատմությանը և հարցի քննարկման նպատակով օգտագործվող ցանկացած այլ փաստաթղթի՝ ինչպես բողոքարկումից առաջ, այնպես էլ դրա ընթացքում.
- Ձեզ հնարավորություն է տալիս անձամբ կամ գրավոր կերպով ապացույցներ բերել, դիմել փաստերին կամ օրենքին.
- Ձեզ, Ձեր ներկայացուցչին կամ հանգուցյալ դիմողի գույքի պաշտոնական ներկայացուցչին հնարավորություն է տալիս

մասնակցել բողոքարկման գործընթացին՝ որպես պաշտոնական կողմեր.
- Ձեզ հնարավորություն է տալիս տեղեկացվելու, որ Ձեր հարցը քննարկվում է՝ Ձեզ բողոքարկման դիմումի ստացման գրավոր հավաստիացում ուղարկելու միջոցով.
- Ձեզ տեղեկացնում է այն մասին, որ Դուք գործի քննության ցանկացած պահին նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու իրավունք ունեք:

Ե՞րբ կարող եմ ես բողոքարկման դիմում ներկայացնել

Դուք կարող եք բողոքարկման դիմում ներկայացնել Ձեր ՀԾ-ին՝

- եթե Ձեր ՀԾ-ն կամ ՀԾ-ի սպասարկողներից որևէ մեկը որոշում է, որ Դուք չեք կարող «Medi-Cal»-ի որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունից օգտվել, քանի որ Ձեր վիճակը չի համապատասխանում բժշկական անհրաժեշտության չափանիշներին: (բժշկական անհրաժեշտության մասին կարող եք կարդալ էջ 21-ում).
- եթե Ձեր սպասարկողը կարծում է, որ Դուք որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայության կարիք ունեք և դիմում է ՀԾ-ին՝ այդ կապակցությամբ նրա հավանությունն ստանալու համար, սակայն ՀԾ-ն հավանություն չի տալիս և մերժում է Ձեր սպասարկողի դիմումը կամ փոխում է ծառայությունը ստանալու հաճախականությունը.
- եթե Ձեր սպասարկողը դիմել է ՀԾ-ին՝ նրա հավանությունը ստանալու համար, բայց որոշում կայացնելու համար ՀԾ-ին լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր, և որոշումը ժամանակին չի կայացվում.
- եթե Ձեր ՀԾ-ն իր կողմից որոշված ժամկետներում Ձեզ ծառայություններ չի տրամադրում.
- եթե Դուք կարծում եք, որ ՀԾ-ն անհրաժեշտ արագությամբ չի տրամադրում ծառայությունները՝ Ձեր կարիքները հոգալու համար.
- եթե Ձեր գանգատի, սովորական կամ արտահերթ բողոքարկման հայցի կապակցությամբ ժամանակին որոշում չի ընդունվել.
- եթե Դուք և Ձեր սպասարկողը համաձայնության չեք գալիս Ձեզ տրամադրվող ծառայությունների հարցում:

Ինչպե՞ս կարող եմ բողոքարկման դիմում ներկայացնել

Ձեր ՀԾ-ին բողոքարկման դիմում ներկայացնելու մասին տեղեկությունը կարող եք կարդալ այս գրքույկի առջևի մասում: Դուք կարող եք զանգահարել Ձեր ՀԾ-ի անվճար հեռախոսահամարով (որը նույնպես նշված է գրքույկի առջևի մասում) և օգնություն ստանալ բողոքարկման դիմում ներկայացնելու հարցում: ՀԾ-ի ծառայությունների տրամադրման բոլոր վայրերում կան հետադարձ հասցեով ծրարներ՝ Ձեր բողոքարկման դիմումն ուղարկելու համար:

Ինչպես իմանամ, որ իմ բողոքարկման դիմումի կապակցությամբ որոշում է կայացվել

ՀՕ-ն Ձեզ կամ Ձեր ներկայացուցչին նամակով կտեղեկացնի Ձեր բողոքարկման դիմումի կապակցությամբ ընդունված որոշման մասին: Նամակում կպարունակվեն հետևյալ տեղեկությունները.

- բողոքարկման դիմումի քննարկման արդյունքները.
- բողոքարկման դիմումի կապակցությամբ ընդունված որոշման ամսաթիվը.
- եթե բողոքարկման հարցն ամբողջությամբ Ձեր օգտին չի լուծվել, ապա նամակում կնշվի նաև, որ Դուք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու իրավունք ունեք և կբացատրվի, թե ինչպես կարելի է այդ անել:

Բողոքարկման դիմումը ներկայացնելու համար վերջնաժամկետ գոյություն ունի՞

Բողոքարկման դիմումը հարկավոր է ներկայացնել այն որոշումից հետո 90 օրվա ընթացքում, որը Դուք բողոքարկում եք, երբ Դուք ստանում եք ծանուցագիրը (տես էջ 25-ը): Հիշե՛ք, միշտ չէ, որ ծանուցագիր է ուղարկվում: Եթե Դուք ծանուցագիր չեք ստացել, ապա բողոքարկման դիմում ներկայացնելու վերջնաժամկետ գոյություն չունի, և Դուք կարող եք ուղարկել դիմումը ցանկացած ժամանակ:

Ե՞րբ որոշում կկայացվի իմ բողոքարկման կապակցությամբ

ՀՕ-ն պարտավոր է Ձեր դիմումը ստանալուց հետո 45 օրացուցային օրվա ընթացքում որոշում կայացնել Ձեր բողոքարկման կապակցությամբ: Այդ ժամանակը կարող է երկարացվել ևս 14 օրով, եթե Դուք երկարաձգում պահանջեք կամ եթե ՀՕ-ն լրացուցիչ տեղեկությունների կարիք ունենա և զգա, որ այդ երկարաձգումը Ձեր օգտին է: Օրինակ՝ որոշումը հետաձգելը Ձեր օգտին կլինի, եթե ՀՕ-ն զգա, որ Ձեր բողոքարկման հայցին դրական լուծում տալու համար ևս մի փոքր ժամանակ է հարկավոր, որպեսզի կարողանա Ձեզանից լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Ի՞նչ անել, եթե ես չեմ կարող 45 օր սպասել մինչև որոշումն ընդունվի

Բողոքարկման դիմումը կարող է ավելի կարճ ժամկետներում քննարկվել, եթե այն կարելի է որակել որպես արտահերթ քննարկում պահանջող հարց: (Խնդրում ենք կարդալ ներքևի պարբերությունը՝ բողոքարկման արտահերթ դիմումների վերաբերյալ): Ձեր հարցի քննարկման ժամանակ ցանկացած պահի Դուք իրավունք ունեք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու:

Ի՞նչ է բողոքարկման արտահերթ դիմումը

Բողոքարկման արտահերթ դիմումը բողոքարկման հարցն ավելի արագ լուծելու եղանակ է: Արագացված դիմում ներկայացնելու ընթացակարգը նույն է, ինչ սովորականինը, սակայն՝

- Ձեր դիմումը պետք է որոշակի պահանջների բավարարի (տես ներքևում).
- բողոքարկման դիմումի արտահերթ քննարկման համար նույնպես, ինչպես սովորականի համար, գոյություն ունեն տարբեր վերջնաժամկետներ.

- բողոքարկման արտահերթ դիմումը Դուք կարող եք բանավոր կերպով ներկայացնել: Դիմումը գրավոր ներկայացնելը պարտադիր չէ:

Ե՞րբ կարող եմ բողոքարկման արտահերթ դիմում ներկայացնել

Եթե Դուք կարծում եք, որ ՀՕ-ի որոշմանը 45 օր սպասելը կարող է վտանգել Ձեր կյանքը, առողջությունը կամ կենսագործունեության առավելագույն ունակություն ձեռք բերելու, այն պահպանելու կամ վերականգնելու Ձեր կարողությունը, ապա Դուք կարող եք բողոքարկման դիմումի արտահերթ քննություն պահանջել: Եթե ՀՕ-ն ընդունում է, որ Ձեր դիմումը համապատասխանում է արտահերթ քննարկման պահանջներին, ապա այն որոշում կկայացնի Ձեր բողոքարկման կապակցությամբ դիմումը ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում: Այդ ժամանակը կարող է երկարացվել ևս 14 օրով, եթե Դուք երկարաձգում պահանջեք կամ եթե ՀՕ-ն լրացուցիչ տեղեկությունների կարիք ունենա և զգա, որ այդ երկարաձգումը Ձեր օգտին է: Եթե Ձեր ՀՕ-ն հետաձգի որոշման կայացումը, այն Ձեզ գրավոր կերպով կբացատրի որոշման հետաձգման պատճառը:

Եթե ՀՕ-ն որոշի, որ Ձեր հարցը չի համապատասխանում արտահերթ քննարկման պահանջներին, այն Ձեզ անմիջապես բանավոր կերպով կհայտնի այդ մասին և գրավոր կերպով կծանուցի 2 օրացուցային օրվա ընթացքում, որից հետո Ձեր հարցը կքննարկվի այս բաժնի սկզբում նշված սովորական քննարկման ընթացակարգի համաձայն: Եթե Դուք համաձայն չլինեք ՀՕ-ի որոշման հետ և համոզված լինեք, որ Ձեր հարցն արտահերթ քննարկում է պահանջում, Դուք կարող եք գանգատ ներկայացնել (գանգատների ներկայացման կարգը նշված է ստորև):

Ձեր բողոքարկման արտահերթ դիմումի կապակցությամբ որոշում ընդունելուն պես՝ ՀՕ-ն Ձեզ և այդ գործընթացի մեջ ներգրավված այլ անձանց բանավոր և գրավոր կերպով կտեղեկացնի վերջնական արդյունքի մասին:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
(սովորական և արտահերթ)

Ի՞նչ է նահանգային անկողմնակալ վերաքննությունը

Նահանգային անկողմնակալ վերաքննությունը Կալիֆոռնիայի սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից իրականացվող անկախ քննություն է՝ պարզելու համար, թե արդյո՞ք դուք ստանում եք այն հոգեբուժական ծառայությունները, որոնք Ձեզ հասնում են «Medi-Cal» ծրագրով:

Նահանգային անկողմնակալ վերաքննության ի՞նչ իրավունքներ ունեմ ես



Դուք իրավունք ունեք՝

- պահանջելու, որպեսզի Կալիֆոռնիայի սոցիալական ծառայությունների դեպարտամենտը վերաքննի Ձեր հարցը (դա կոչվում է նահանգային անկողմնակալ վերաքննություն).
- տեղեկացվելու, թե ինչպես նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել.
- տեղեկացվելու, թե ինչ օրենքներ են գործում նահանգային անկողմնակալ վերաքննությանը ներկայացվելու կապակցությամբ.
- շարունակելու ստանալ Ձեզ հասանելիք ծառայությունները և վճարումները՝ նահանգային անկողմնակալ վերաքննության անցկացման ընթացքում, եթե Դուք նահանգային անկողմնակալ վերաքննության համար դիմել եք պահանջվող ժամկետից ոչ ուշ.
- նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել՝ անկախ այն բանից, Դուք օգտվե՞լ եք Ձեր ՀՕ-ի բողոքարկման ընթացակարգից թե՞ ոչ, և անկախ նրանից,Դուք ծանուցում ստացե՞լ եք, թե՞ ոչ:

Ե՞րբ կարող եմ ես նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել

Դուք կարող եք նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել՝

- եթե Ձեր ՀՕ-ն կամ ՀՕ-ի սպասարկողներից որևէ մեկը որոշում է, որ Դուք չեք կարող «Medi-Cal»-ի որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունից օգտվել, քանի որ Ձեր վիճակը չի համապատասխանում բժշկական անհրաժեշտության չափանիշներին: (բժշկական անհրաժեշտության մասին կարող եք կարդալ էջ 21-ում).
- եթե Ձեր սպասարկողը կարծում է, որ Դուք որևէ մասնագիտացված հոգեբուժական ծառայության կարիք ունեք և դիմում է ՀՕ-ին՝ այդ կապակցությամբ նրա հավանությունն ստանալու համար, սակայն ՀՕ-ն հավանություն չի տալիս և մերժում է Ձեր սպասարկողի դիմումը կամ փոխում է ծառայությունը ստանալու հաճախականությունը.
- եթե Ձեր սպասարկողը դիմել է ՀՕ-ին՝ նրա հավանությունը ստանալու համար, բայց որոշում կայացնելու համար ՀՕ-ին լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր և որոշումը ժամանակին չի կայացվում.

- եթե Ձեր ՀՕ-ն իր կողմից որոշված ժամկետներում Ձեզ ծառայություններ չի տրամադրում.
- եթե Դուք կարծում եք, որ ՀՕ-ն բավարար արագությամբ չի տրամադրում ծառայությունները՝ Ձեր կարիքները հոգալու համար.
- եթե Ձեր գանգատի, սովորական կամ արտահերթ բողոքարկման հայցի կապակցությամբ ժամանակին որոշում չի ընդունվել.
- եթե Դուք և Ձեր սպասարկողը համաձայնության չեք գալիս Ձեզ տրամադրվող ծառայությունների հարցում:

Ինչպե՞ս նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել

Դուք կարող եք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել Կալիֆոռնիայի սոցիալական ծառայությունների դեպարտամենտից: Այդ անելու համար՝ հարկավոր է գրել՝

State Hearing Division
California Department of Social Services
P.O. Box 9424443, Mail Station 19-37
Sacramento, CA 94244-2430

Նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու համար Դուք կարող եք նաև զանգահարել (800) 952-5253 հեռախոսահամարով, ֆաքս ուղարկել (916) 229-4110 հեռախոսահամարով կամ գրել Սոցիալական ծառայությունների դեպարտամենտի Նահանգային վերաքննությունների բաժին՝ P.O. Box 944243, Mail Station 19-37, Sacramento, CA 94244-2430 հասցեով:

Նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնելու համար վերջնաժամկետ գոյություն ունի՞

Եթե Դուք ծանուցագիր չեք ստացել կամ բողոքարկման դիմում եք ներկայացրել ՀՕ-ին, ապա կարող եք ցանկացած ժամանակ նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել:

Եթե Դուք ծանուցագիր եք ստանում և որոշում եք, բողոքարկման փոխարեն կամ դրա հետ միաժամանակ, նաև նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել, ապա հարկավոր է հայցը ներկայացնել 90 օրվա ընթացքում այն օրվանից հետո երբ Ձեզ փոստով ուղարկվել կամ անձամբ հանձնվել է ծանուցագիրը:

Եթե Դուք բողոքարկման դիմում եք ներկայացնում ՀՕ-ին և, ՀՕ-ի որոշումը ստանալուց հետո, որոշում եք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել, ապա հարկավոր է վերաքննության հայցը ներկայացնել ՀՕ-ի որոշումը պարունակող նամակի ծրարի վրա դրված կնիքի ամսաթվից հետո 90 օրվա ընթացքում:

Կարո՞ղ եմ ես շարունակել ստանալ ծառայությունները, մինչ սպասում եմ նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը

Դուք կարող եք շարունակել ստանալ ծառայությունները մինչ սպասում եք նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը, եթե Ձեր սպասարկողն այն կարծիքին է, որ Ձեզ տրամադրվող մասնագիտական հոգեբուժական ծառայությունները չպետք է դադարեցվեն և դիմում է ՀՕ-ին՝ այդ կապակցությամբ նրա հավանությունը ստանալու համար, սակայն ՀՕ-ն հավանություն չի տալիս և մերժում է Ձեր սպասարկողի դիմումը կամ փոխում է ծառայությունը ստանալու հաճախականությունը: Այդ դեպքում Դուք միշտ ծանուցագիր կստանաք ՀՕ-ից: Բացի այդ, Դուք ստիպված չեք վճարել այն ծառայությունների համար, որոնք տրամադրվում են Ձեզ՝ նահանգային անկողմնակալ վերաքննության ընթացքում:

Ի՞նչ է հարկավոր անել, եթե ես ցանկանում եմ շարունակել ծառայություններ ստանալ, մինչ սպասում եմ նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը

Եթե Դուք ցանկանում եք, որ Ձեզ տրամադրվող ծառայությունները շարունակվեն, ապա հարկավոր է նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել 10 օրվա ընթացքում այն օրվանից հետո երբ Ձեզ փոստով ուղարկվել կամ անձամբ հանձնվել է ծանուցագիրը:

Եթե Դուք ծանուցագիր եք ստանում և որոշում եք, բողոքարկման փոխարեն կամ դրա հետ միաժամանակ, նաև նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել, ապա հարկավոր է հայցը ներկայացնել 90 օրվա ընթացքում այն օրվանից հետո երբ Ձեզ փոստով ուղարկվել կամ անձամբ հանձնվել է ծանուցագիրը:

Ի՞նչ է հարկավոր անել, եթե ես անկարող եմ 90 օր սպասել նահանգային անկողմնակալ վերաքննության որոշմանը

Եթե Դուք կարծում եք, որ որոշմանը 90 օր սպասելը կարող է վտանգել Ձեր հոգեկան առողջական վիճակը, այդ թվում՝ կենսագործունեության առավելագույն ունակություն ձեռք բերելու, այն պահպանելու կամ վերականգնելու Ձեր կարողությունը, ապա Դուք կարող եք արտահերթ (արագ) նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել: Սոցիալական ծառայությունների դեպարտամենտի նահանգային վերաքննությունների բաժինը կքննարկի Ձեր դիմումը և կորոշի, թե արդյո՞ք Ձեր հարցը պետք է քննարկվի արտահերթ կարգով: Եթե որոշվի Ձեր հարցն արտահերթ կերպով քննարկել, ապա նահանգային վերաքննությունների բաժնի կողմից Ձեր հայցը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում կկատարվի նահանգային անկողմնակալ վերաքննությունը և կկայացվի որոշումը:

2003 թ. ՀՕ-ի հետ ունեցած Ձեր խնդիրները լուծելու ընթացակարգերի նկարագրության մեջ օգտագործվող որոշ բառեր փոխվել են: Խնդրում ենք հաշվի առնել, որ վերաքննությունն անկարող է օգնել Ձեզ այն հարցերում, որոնց առնչությամբ Դուք կարող եք գանգատ ներկայացնել: Դուք այլևս չեք կարող գանգատի քննարկման ցանկացած պահի նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել, սակայն բողոքարկման հարցի քննարկման ընթացքում Դուք կարող եք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել:

Ի՞նչ է գանգատը

Գանգատը Ձեր դժգոհության արտահայտումն է Ձեզ տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների հետ առնչվող որևէ հարցի կապակցությամբ, որը հնարավոր չէ լուծել բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության միջոցով (բողոքարկման և նահանգային անկողմնակալ վերաքննության մասին կարող եք կարդալ էջ 29-ում և էջ 33-ում):

Գանգատների ներկայացման կարգը՝

- պարզ և հասկանալի ընթացակարգ է, որը թույլ է տալիս բանավոր կամ գրավոր կերպով ներկայացնել Ձեր գանգատը.
- երաշխավորում է, որ գանգատը ոչ մի կերպ չի անդրադառնա Ձեր կամ Ձեր սպասարկողի դեմ.
- Ձեզ թույլ է տալիս լիազորել մեկ այլ անձի, այդ թվում, Ձեր սպասարկողին հանդես գալ Ձեր անունից: Եթե Դուք որևէ այլ անձի լիազորեք հանդես գալ Ձեր անունից, հնարավոր է, որ ՀՕ-ն Ձեզանից պահանջի հատուկ թերթիկ ստորագրել, որով Դուք ՀՕ-ին լիազորում եք այդ անձին տեղեկություններ տրամադրել.
- ապահովում է, որ գանգատի կապակցությամբ որոշում կայացնողներն այդ անելու իրավասություն ունենան և նախկին վերանայման կամ որոշման գործընթացի որևէ փուլին մասնակցած չլինեն.
- պարզաբանում է Ձեր, Ձեր ՀՕ-ի և Ձեր սպասարկողի դերը և պարտականությունները.
- ապահովում է գանգատի պատասխանը պահանջվող ժամկետներում:

Ե՞րբ կարող եմ ես գանգատ ներկայացնել

Դուք կարող եք գանգատ ներկայացնել այն ժամանակ, երբ ՀՕ-ի կողմից տրամադրվող մասնագիտական հոգեբուժական ծառայությունը Ձեզ չի գոհացնում կամ ՀՕ-ի հետ կապված որևէ այլ դժգոհություն ունեք:

Ինչպե՞ս գանգատ ներկայացնեմ

Դուք կարող եք զանգահարել Ձեր շրջանի ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով և օգնություն ստանալ գանգատ ներկայացնելու հարցում: ՀՕ-ի ծառայությունների տրամադրման բոլոր վայրերում կան հետադարձ հասցեով ծրարներ, որոնցում Դուք կարող եք ուղարկել Ձեր գանգատը: Գանգատը կարելի է ներկայացնել բանավոր կամ գրավոր: Բանավոր գանգատ ներկայացնելուց հետո՝ այն նաև գրավոր ներկայացնելը պարտադիր չէ:

Ինչպե՞ս կարող եմ պարզել, որ ՀՕ-ն ստացել է իմ գանգատը

Ձեր գանգատը ստանալուց հետո՝ ՀՕ-ն Ձեզ գրավոր կերպով կտեղեկացնի այդ մասին:

Ե՞րբ որոշում կկայացվի իմ գանգատի կապակցությամբ

ՀՕ-ն պարտավոր է որոշում կայացնել գանգատը ներկայացնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Այդ ժամանակը կարող է երկարացվել ևս 14 օրով, եթե Դուք երկարաձգում պահանջեք կամ եթե ՀՕ-ն լրացուցիչ տեղեկությունների կարիք ունենա և զգա, որ այդ երկարաձգումը Ձեր օգտին է:

Ինչպե՞ս ես կիմանամ, որ ՀՕ-ն որոշում է կայացրել իմ գանգատի կապակցությամբ

Երբ Ձեր գանգատի կապակցությամբ որոշում կայացվի, ՀՕ-ն գրավոր կերպով Ձեզ կամ Ձեր ներկայացուցչին կտեղեկացնի կայացված որոշման մասին: Եթե ՀՕ-ն Ձեզ կամ որևէ շահագրգիռ կողմի ժամանակին չտեղեկացնի ընդունված որոշման մասին, ՀՕ-ն Ձեզ ծանուցագիր կուղարկի, որտեղ նշված կլինի, որ Դուք իրավունք ունեք նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջելու: ՀՕ-ն այդ ծանուցագիրը կուղարկի վերջնաժամկետի վերջին օրը:

Գանգատ ներկայացնելու համար վերջնաժամկետ գոյություն ունի՞

Դուք կարող եք գանգատ ներկայացնել ցանկացած ժամանակ:

Ե՞րբ որոշում կկայացվի իմ գանգատի կապակցությամբ

ՀՕ-ն պարտավոր է որոշում կայացնել գանգատը ներկայացնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Այդ ժամանակը կարող է երկարացվել ևս 14 օրով, եթե Դուք երկարաձգում պահանջեք կամ եթե ՀՕ-ն լրացուցիչ տեղեկությունների կարիք ունենա և զգա, որ այդ երկարաձգումը Ձեր օգտին է: Օրինակ՝ որոշումը հետաձգելը Ձեր օգտին կլինի, եթե ՀՕ-ն զգա, որ Ձեր գանգատին դրական լուծում տալու համար ևս մի փոքր ժամանակ է հարկավոր, որպեսզի կարողանա Ձեզանից լրացուցիչ տեղեկություն ստանալ:

Ի՞նչ իրավունքներ ունեմ ես

Որպես «Medi-Cal» ստանալու իրավասություն ունեցող անձ՝ Դուք, բժշկական անհրաժեշտության դեպքում, իրավունք ունեք ՀՕ-ից մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու: Այդ ծառայությունները ստանալիս Դուք իրավունք ունեք՝

- բուժում ստանալիս՝ Ձեր անձի նկատմամբ հարգանքի և Ձեր արժանապատվության ու անձնական տեղեկությունների գաղտնիության պահպանման.
- Ձեզ հասկանալի ձևով տեղեկություններ ստանալու՝ բուժման գոյություն ունեցող տարբերակների և այլընտրանքների մասին.
- մասնակցելու Ձեր հոգեկան առողջության վերաբերյալ կայացվող որոշումներին, այդ թվում՝ մերժելու որևէ առաջարկվող բուժում.
- չենթարկվելու որևէ տիպի զրկանքի կամ մեկուսացման՝ որպես ուժի գործադրման, կարգապահության, հանգստության ապահովման, պատժի կամ վրիժառության միջոց՝ համաձայն դաշնային օրենքների, որոնք վերաբերում են զրկանքի կամ մեկուսացման գործադրմանն այնպիսի հիվանդանոցներում, ինչպիսիք են կացարանները և հոգեբուժական հիվանդանոցները, որտեղ մարդիկ գիշերում են.
- պահանջելու և ստանալու Ձեր հիվանդության պատմության պատճենը, և պահանջելու, որ դրանցում փոփոխություններ կամ ուղղումներ կատարվեն.
- ստանալու այս գրքույկը, որտեղ նկարագրվում են ՀՕ-ի կողմից վճարվող ծառայությունները, բացատրվում ՀՕ-ի այլ պարտավորությունները և Ձեր իրավունքները: Դուք նաև իրավունք ունեք այս տեղեկությունը և Ձեզ տրամադրված ցանկացած այլ տեղեկություն ստանալու Ձեզ համար մատչելի ձևով: Դա նշանակում է, օրինակ՝ որ ՀՕ-ն պարտավոր է իր կողմից գրավոր կերպով տրամադրվող տեղեկությունները թարգմանել բոլոր այն լեզուներով, որոնցով խոսում են տվյալ ՀՕ-ի շրջանում բնակվող «Medi-Cal» ստանալու իրավասու անձանց 5 տոկոսը կամ 3000 հոգի (կախված նրանից, թե որն է ավելի քիչ) և անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ տրամադրել այն անձանց, ովքեր այլ լեզուներով են խոսում: Դա նշանակում է նաև, որ ՀՕ-ն պարտավոր է տարբեր նյութեր տրամադրել հատուկ պահանջներ ունեցող անձանց համար, օրինակ՝ կույրերի կամ սահմանափակ տեսողություն ունեցողների, կամ այն անձանց, ովքեր դժվարանում են կարդալ.
- մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու մի ՀՕ-ից, որը կատարում է Նահանգի հետ կնքած պայմանագրով իր վրա վերցրած պարտավորությունները, մասնավորապես՝ ծառայությունների մատչելիության, տվյալ շրջանում անհրաժեշտ ծառայությունների և անհրաժեշտ թվով մարդկանց սպասարկելու հնարավորություն ապահովելու, հիվանդների խնամքը համակարգելու և ավարտին հասցնելու, ինչպես նաև

ծառայությունների համար վճարելու և դրանք արտոնելու հարցերում: ՀՕ-ն պարտավոր է՝

- այնքան սպասարկողներ ունենալ ունենալ կամ այնքան սպասարկողների հետ պայմանագրեր կնքած լինել, որքան անհրաժեշտ է, որ «Medi-Cal»-ի իրավասություն ունեցող բոլոր այն անձինք, ում մասնագիտական հոգեբուժական ծառայություններ են հասնում, ժամանակին ստանան դրանք.
- վճարել իր համակարգից դուրս բժշկական անհրաժեշտության պայմաններում տրամադրված բոլոր այն ծառայությունների համար, որոնք տրամադրող աշխատակիցներ կամ պայմանագրային հիմունքներով աշխատող սպասարկողներ ՀՕ-ն չունի: «Համակարգից դուրս» նշանակում է, որ տվյալ սպասարկողն ընդգրկված չէ ՀՕ-ի սպասարկողների ցուցակում: ՀՕ-ն պետք է հոգ տանի, որ Դուք ոչ մի լրացուցիչ ծախս չկատարեք իր սպասարկողների ցուցակում չընդգրկված սպասարկողից ծառայություններ ստանալու համար.
- ապահովել, որ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունները տրամադրվեն այդ ծառայության որակավորում ունեցող մասնագետների կողմից.
- ապահովել, որ տրամադրվեն բավարար թվով, ժամկետով և բավարար չափով ոլորտներ ընդգրկող ծառայություններ՝ իր կողմից սպասարկվող «Medi-Cal» ստանալու իրավունք ունեցող անձանց կարիքները հոգալու համար: Այդ թվում՝ ՀՕ-ն պետք է ապահովի, որ տրամադրվող ծառայությունների համար վճարումներն արտոնելու ՀՕ-ի համակարգը հիմնված լինի բժշկական անհրաժեշտության չափանիշների վրա և այնպիսի ընթացակարգ կիրառվի, որը բացառի բժշկական անհրաժեշտության չափանիշների չարաշահումը.
- հոգ տանել, որ իր սպասարկողներն ինչպես հարկն է գնահատեն ծառայություններ ստանալու ենթակա անձանց վիճակը և աշխատեն նրանց հետ՝ բուժման այնպիսի ծրագիր մշակելու նպատակով, որը կնախատեսի բուժման խնդիրները և տրամադրվելիք ծառայությունները.
- հոգ տանել, որպեսզի Դուք, առանց լրացուցիչ ծախս կատարելու, ստանաք ՀՕ-ի համակարգի կամ դրանից դուրս գործող մեկ այլ մասնագետի կարծիքը.
- անհրաժեշտության դեպքում՝ համակարգել իր կողմից տրամադրված ծառայությունները՝ նույն անձին «Medi-Cal» կառավարվող խնամքի ծրագրով կամ նախնական խնամքի բժշկի կողմից տրամադրվող ծառայությունների հետ և, այդ անելիս, հոգ տանել, որպեսզի պահպանվի ծառայություններ ստացող յուրաքանչյուր անհատի մասին եղած տվյալների գաղտնիությունը՝ առողջապահական տեղեկությունների գաղտնիության պահպանման մասին դաշնային օրենքների համաձայն.
- հոգ տանել, որպեսզի ծառայությունները ժամանակին տրամադրվեն, ընդ որում՝ ապահովել դրանց շուրջօրյա և ամենօրյա անխափան տրամադրումն այն դեպքում, երբ որևէ

շտապ կամ հրատապ օգնություն կամ ճգնաժամային վիճակ բուժելու բժշկական անհրաժեշտություն կա.
- մասնակցել բոլոր հաճախորդներին իրենց ազգային և մշակութային առանձնահատկությունների հաշվառումով ծառայություններ մատուցելու Նահանգի որդեգրած սկզբունքի կիրառմանը՝ այդ թվում այն անձանց, ովքեր անգլերենի սահմանափակ գիտելիքներ ունեն և ներկայացնում են տարբեր մշակութային և ազգային խմբեր:

Ձեր ՀՕ-ն պետք է հոգ տանի, որ Ձեր բուժումը հակառակ ազդեցությունը չգործի՝ այն բանի հետևանքով, որ Դուք օգտվում եք Ձեր իրավունքներից: Ձեր հոգեբուժական ծրագիրը պարտավոր է ոչ միայն ապահովել այստեղ նշված Ձեր իրավունքները, այլև կատարել այլ դաշնային և նահանգային օրենքների պահանջները (օրինակ՝ 1964 թ. «Քաղաքացիական իրավունքների մասին հրամանագրի» վերնագիր VI-ի, որն ուժի մեջ է մտել 45 CFR կանոնակարգերի մաս 80-ի համաձայն, 1975 թ. «Տարիքային խտրականության մասին հրամանագրի», որն ուժի մեջ է մտել 45 CFR կանոնակարգերի մաս 91-ի համաձայն, 1973 թ. «Վերականգնման մասին հրամանագրի» և «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին հրամանագրի» վերնագրեր II-ի և III-ի պահանջները): Հնարավոր է, որ Դուք այլ իրավունքներ ևս ունենաք՝ հոգեկան հիվանդների բուժման վերաբերյալ նահանգային օրենքներով, որոնց ծանոթանալու համար կարող եք զանգահարել Ձեր շրջանի Հիվանդների իրավունքների պաշտպանության գործակալին (զանգահարեք Ձեր շրջանի հոգեբուժության դեպարտամենտ և խնդրեք Հիվանդների իրավունքների պաշտպանության գործակալին) և դիմել Ձեզ հետաքրքրող կոնկրետ հարցերով:

Ի՞նչ է նախնական ցուցումը

Դուք նախնական ցուցում տալու իրավունք ունեք: Նախնական ցուցումը Ձեր բժշկական խնամքի վերաբերյալ գրավոր հրահանգ է, որը ճանաչվում է Կալիֆոռնիայի օրենքներով որպես պաշտոնական փաստաթուղթ: Դրանում սովորաբար նշվում է, թե ինչ կերպ Դուք կցանկանայիք առողջապահական խնամք ստանալ կամ ինչ որոշումներ կցանկանայիք, որ Ձեր փոխարեն ընդունվեն, եթե կամ երբ Դուք անկարող լինեք ինքներդ այդ ցուցումները տալու: Նախնական ցուցումը հաճախ կոչում են «կյանքի կտակ» կամ երկարատև լիազորագիր:

Կալիֆոռնիայի օրենքը նախնական ցուցումը սահմանում է որպես անհատի կողմից իր բժշկական խնամքի վերաբերյալ կատարված բանավոր կամ գրավոր հրահանգ կամ լիազորագիր (գրավոր փաստաթուղթ, որը լիազորում է որևէ մեկին Ձեր փոխարեն որոշումներ ընդունել): ՀՕ-ները պետք է նախնական ցուցումների վերաբերյալ գործող կանոններ ունենան: Ձեր ՀՕ-ն պարտավոր է գրավոր տեղեկություն տրամադրել նախնական ցուցումների վերաբերյալ ՀՕ-ում գործող կանոնների և դրանց վերաբերյալ նահանգային օրենքների մասին՝ «Medi-Cal»-ի իրավասություն ունեցող բոլոր այն չափահասներին, որոնք նման տեղեկության համար դիմում են ՀՕ-ին: Եթե Ձեզ նման տեղեկություն է հարկավոր, Դուք պետք է զանգահարեք Ձեր ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով, որը նշված է այս գրքույկի առջևի մասում:

Նախնական ցուցման նպատակն է՝ մարդուն հնարավորություն տալ ինքնուրույն որոշելու, թե ինչ բուժում է ցանկանում ստանալ, հատկապես այն ժամանակ, երբ նա անկարող կլինի այդ ցուցումները տալ: Դա պաշտոնական փաստաթուղթ է, որը մարդուն հնարավորություն է տալիս նախապես ասելու, թե ինչ ցանկություն կունենա, եթե անկարող լինի իր առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնել: Այդ ցանկությունների թվում կարող են լինել, օրինակ՝ բուժումը, վիրահատությունը ընդունելու կամ մերժելու կամ որևէ այլ տարբերակ ընտրելու իրավունքը: Կալիֆոռնիայում նախնական ցուցումը բաղկացած է երկու մասից.

1. ներկայացուցչի (որևէ անձի) նշանակումը, որը պետք է Ձեր փոխարեն Ձեր բժշկական խնամքի մասին որոշումներ կայացնի և
2. Ձեր սեփական ցուցումները Ձեր բժշկական խնամքի վերաբերյալ:

Եթե Դուք գանգատներ ունեք նախնական ցուցման պահանջների վերաբերյալ, Դուք կարող եք դիմել Կալիֆոռնիայի առողջապահական ծառայությունների դեպարտամենտի Լիազորագրերի և վավերացման բաժին՝ զանգահարելով (800) 236-9747 հեռախոսահամարով կամ նամակ ուղարկելով հասցեով: California Department of Public Health, Licensing and Certification Division PO Box 997434, MS 3202, Sacramento, CA 95899-7434

Ինչու՞ է մշակութային հարցերում տեղեկացվածությունը և տարբեր լեզուներով ծառայություններ մատուցելը կարևոր

Մշակութային հարցերում տեղեկացված հոգեբուժական համակարգն այնպիսի հմտություններ, վերաբերմունք և քաղաքականություն է կիրառում, որը թույլ է տալիս բավարարել տարբեր արժեքներ, հավատալիքներ և կողմնորոշումներ ունեցող, բազմազան ազգերից ու դավանանքներից բաղկացած ու բազում լեզուներով խոսող հասարակության յուրաքանչյուր անդամի պահանջները: Դա մի համակարգ է, որը կատարելագործում է Կալիֆոռնիայի բազմազգ բնակչությանը տրամադրվող ծառայությունների մակարդակը՝ հասկանալով և հարգելով նրանց տարբերությունները:

Ձեր շրջանի ՀՕ-ն պարտավոր է մշակութային և լեզվական առումով բարձր մակարդակի մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ տրամադրել իր հաճախորդներին: Օրինակ՝ անգլերեն չխոսող կամ վատ խոսող անձինք իրավունք ունեն ծառայություններն ստանալու իրենց նախընտրած լեզվով և թարգմանիչ պահանջելու: Եթե նրանք թարգմանիչ են պահանջում, նրանց պետք է անվճար թարգմանիչ տրամադրվի: Ծառայություններ ստանալու համար ՀՕ-ին դիմող անձինք պարտավոր չեն իրենց հետ բերել իրենց թարգմանիչներին: Ձեր իրավունքների, արտոնությունների և բուժման տարբերակների մասին բանավոր և գրավոր թարգմանությունները Դուք կարող եք ստանալ Ձեր նախընտրած լեզվով: Այդ տեղեկությունները տրամադրվում են նաև այլ միջոցներով՝ այն մարդկանց համար, ովքեր կարդալու հնարավորություն չունեն կամ տեսողության հետ կապված խնդիրներ ունեն: Այս գրքույկի առջևի մասում բացատրվում է, թե ինչպես կարելի է ստանալ այդ տեղեկությունը: Ձեր շրջանի ՀՕ-ն պարտավոր է՝

- մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ տրամադրել Ձեր նախընտրած լեզվով.
- մշակութային առումով ընդունելի գնահատում և բուժում տրամադրել.
- մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հատուկ մոտեցումներ կիրառել ՀՕ-ի սպասարկման շրջանում՝ ապահով և մշակութային առումով իրազեկված համակարգ ստեղծելու նպատակով.
- աշխատանք տանել լեզվի հետ կապված արգելքները վերացնելու ուղղությամբ.
- ջանալ գոհացնել ծառայություններ ստացող անձանց մշակութային առանձնահատկություններով պայմանավորված պահանջները.
- ծառայությունները տրամադրելիս՝ հաշվի առնել տարբեր մշակույթներում հիվանդության և առողջության նկատմամբ եղած տարբեր մոտեցումները.
- հաշվի առնել Ձեր աշխարհայացքը՝ Ձեզ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ տրամադրելիս.
- հատուկ համակարգ ունենալ՝ ՀՕ-ի աշխատակիցներին և պայմանագրային հիմունքներով ՀՕ-ի հետ համագործակցող

Անգլերեն չխոսող կամ վատ խոսող անձինք իրավունք ունեն ծառայություններն ստանալու իրենց նախընտրած լեզվով և թարգմանիչ պահանջելու:

սպասարկողներին բացատրելու, թե ինչ է նշանակում հոգեկան հիվանդությամբ ապրելը՝ հիվանդի տեսանկյունից.

- Ձեր ՀՕ-ի կողմից տրամադրվող մշակութային/լեզվական ծառայությունների ցուցակ տրամադրել Ձեզ.
- Ձեր մայրենի լեզվով տրամադրվող մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների և ՀՕ-ի այլ ծառայությունների ցուցակ տալ Ձեզ (դասավորված ըստ ծառայության տրամադրման վայրի և ըստ ծառայությունների).
- բանավոր թարգմանության ծառայություններ տրամադրել անվճար. սա վերաբերում է անգլերենից բացի բոլոր լեզուներին.
- գրավոր տեղեկություններ տրամադրել հիմնական լեզուներով, այլընտրանքային միջոցներով և այնպես, որ հաշվի առնվեն հատուկ պահանջներ ունեցողների, օրինակ՝ վարժ չկարդացող անձանց պահանջները.
- ողջ նահանգի տարածքում շուրջօրյա և շաբաթը յոթ օր գործող անվճար հեռախոսահամար տրամադրել, որը Ձեր լեզվով Ձեզ տեղեկություններ կտա այն մասին, թե ինչպես կարող եք մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալ, այդ թվում՝ ինչ ծառայություններ կարող եք ստանալ հրատապ օգնություն պահանջող դեպքերում և ինչպես կարող եք օգտվել ՀՕ-ի հետ ծագած խնդիրների լուծման և նահանգային անկողմնակալ վերաքննության ընթացակարգերից.
- տարեկան առնվազն մեկ անգամ զրուցել մշակութային, ազգային կամ լեզվական փոքրամասնություն կազմող խմբերի ներկայացուցիչների հետ՝ պարզելու համար թե արդյո՞ք նրանց կարծիքով իրենք նույն վերաբերմունքին են արժանանում, ինչ մնացածները:

Ինչպե՞ս մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանամ

Եթե Դուք կարծում եք, որ մասնագիտացված հոգեբուժական ծառայությունների կարիք ունեք, Դուք կարող եք ինքներդ դիմել ՀՕ-ին: Դուք կարող եք զանգահարել այս գրքույկի առաջին մասում նշված ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով: Այս գրքույկի առջևի էջը և 11-րդ էջում գտնվող "Ծառայությունները" բաժինը ծանոթացնում են Ձեզ ՀՕ-ով տրամադրվող ծառայություններին և բացատրում, թե ինչպես կարելի է ստանալ դրանք:

Դուք կարող եք նաև այլ ճանապարհներով մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալ: Ձեր ՀՕ-ն պարտավոր է ընդունել այլ բժիշկների և նախնական խնամք տրամադրողների ուղեգրերը մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ ստանալու համար, եթե նրանք կարծում են, որ Դուք այդ ծառայությունները ստանալու կարիք ունեք, ինչպես նաև Ձեր «Medi-Cal» կառավարվող խնամքի ծրագրի ուղեգրերը, եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք: Սովորաբար Ձեր սպասարկողը կամ «Medi-Cal» կառավարվող խնամքի ծրագիրը, ուղեգիր տալուց առաջ, պետք է ստանա Ձեր թույլտվությունը կամ երեխայի ծնողի կամ խնամակալի թույլտվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ շտապ հոգեբուժական օգնություն է հարկավոր: Այլ անձինք և կազմակերպություններ նույնպես կարող են ՀՕ-ի ծառայություններ ստանալու ուղեգիր տալ, ինչպես օրինակ դպրոցը, շրջանի նպաստների կամ սոցիալական օգնության դեպարտամենտները, խնամակալները, ընտանիքի անդամները կամ իրավապահ մարմինները:

Այդ մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք նայել այս բաժնին հաջորդող սպասարկողների ցուցակը կամ գրքույկի առաջին մասը, որտեղ խոսվում է ՀՕ-ի հատուկ արտոնության և բժշկի ուղեգրերի մասին:

Ինչպես կարող եմ մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ տրամադրող սպասարկող գտնել

Որոշ ՀՕ-ներ պահանջում են, որ, նախքան սպասարկողին դիմելը, Դուք ստանաք ՀՕ-ի արտոնությունը: Այլ ՀՕ-ներ կարող են Ձեզ ուղարկել սպասարկողի մոտ, որը պատրաստ է Ձեզ սպասարկելու, իսկ մյուսները թույլ կտան ուղղակի դիմել սպասարկողին:

ՀՕ-ն կարող է որոշ չափով սահմանափակել սպասարկողների ընտրությունը: Երբ Դուք նոր եք սկսում ծառայություններ ստանալ, Ձեր ՀՕ-ն պետք է Ձեզ հնարավորություն տա գոնե երկու սպասարկողներից մեկին ընտրելու, բացի այն դեպքերից, երբ այդ չանելու համար հիմնավորված պատճառներ կան, օրինակ եթե նման ծառայություն տրամադրող միայն մեկ սպասարկող կա ՀՕ-ի համակարգում: Ձեր ՀՕ-ն պետք է նաև Ձեզ՝ սպասարկողին փոխելու հնարավորություն տա: Երբ Դուք դիմում եք ՀՕ-ին Ձեր սպասարկողին փոխելու հարցով, ՀՕ-ն պետք է Ձեզ հնարավորություն տա ընտրել երկու սպասարկողից մեկին ընտրելու, բացի այն դեպքերից, երբ այդ չանելու համար հիմնավորված պատճառներ կան:

Պատահում է, որ ՀՕ-ի սպասարկողները դուրս են գալիս ծրագրի համակարգից՝ սեփական կամքով կամ ՀՕ-ի պահանջով: Երբ դա տեղի է ունենում, ՀՕ-ն պետք է, իր հնարավորության սահմաններում, տվյալ սպասարկողի պայմանագիրը չեղարկելու մասին ծանուցումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում տեղյակ պահի տվյալ սպասարկողի ծառայություններից օգտվող բոլոր անձանց նրա հեռանալու մասին:

Երբ ես սպասարկող գտնեմ, ՀՕ-ն նրան կհայտնի՞ թե ես ինչ ծառայություններ պետք է ստանամ

Դուք, Ձեր սպասարկողը և ՀՕ-ն միասին եք որոշում, թե Դուք ինչ ծառայություններ պետք է ստանաք ՀՕ-ից՝ կախված բժշկական անհրաժեշտության չափանիշներից և ՀՕ-ի միջոցով տրամադրվող ծառայությունների ցուցակից (տես էջ 21 և 12): Երբեմն ՀՕ-ն կարող է այդ հարցի մասին որոշումը թողնել Ձեզ և Ձեր սպասարկողին: Բայց ՀՕ-ն կարող է նաև Ձեր սպասարկողից պահանջել, Ձեզ որևէ ծառայություն տրամադրելուց առաջ, հայտնել ՀՕ-ին թե ինչու է սպասարկողը կարծում, որ ծառայությունը պետք է տրամադրվի, որպեսզի ՀՕ-ն սպասարկողի որոշման գնահատում կատարի: Սպասարկողի որոշման գնահատումը պետք է մասնագետ հոգեբույժ կատարի: Այդ գնահատումը կոչվում է ՀՕ-ի վճարման համար արտոնություն տալու ընթացակարգ: Նահանգը պահանջում է, որ ՀՕ-ն նման արտոնություն տալու ընթացակարգեր ունենա ինտենսիվ ցերեկային բուժման, ցերեկային վերականգնման և վարքագծի բուժական ծառայությունների (ՎԲԾ) համար:

Եթե այս գրքույի հետ միասին Ձեզ չի տրվել սպասարկողների ցուցակը, Դուք կարող եք խնդրել ՀՕ-ին ուղարկել Ձեզ ցուցակը՝ զանգահարելով ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով, որը նշված է այս գրքույկի առջևի մասում:

ՀՕ-ի արտոնությունը պետք է տրվի որոշակի սահմանված ժամկետներում: Երբ Ձեր սպասարկողը դիմում է ՀՕ-ին սովորական արտոնության համար, ՀՕ-ն պետք է որոշում կայացնի 14 օրացուցային օրվա ընթացքում: Երբ Դուք կամ Ձեր սպասարկողը խնդրում եք, կամ երբ ՀՕ-ն կարծում է, որ Ձեր սպասարկողից լրացուցիչ տեղեկություն պահանջելը Ձեր օգտին է, ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 14 օրացուցային օրով: Օրինակ՝ որոշումը հետաձգելը Ձեր օգտին կլինի, եթե ՀՕ-ն զգա, որ կարող է ընդունել Ձեր ծառայություններ տրամադրելու սպասարկողի հայցը, այն դեպքում եթե Ձեր սպասարկողը լրացուցիչ տեղեկություններ տա, իսկ այդ տեղեկությունները չտրամադրելու դեպքում, սպասարկողի հայցը կմերժվի: Եթե ՀՕ-ն հետաձգի իր որոշումը, այդ մասին Դուք տեղյակ կպահվեք գրավոր կերպով:

Եթե Ձեր սպասարկողը կամ ՀՕ-ն կարծում է, որ որոշմանը 14 օր սպասելը կարող է վտանգել Ձեր կյանքը, առողջությունը կամ կենսագործունեության առավելագույն ունակություն ձեռք բերելու, այն պահպանելու կամ վերականգնելու Ձեր կարողությունը, ապա ՀՕ-ն պետք է որոշում կայացնի 3 աշխատանքային օրվա ընթացքում: Երբ Դուք կամ Ձեր սպասարկողը խնդրում եք, կամ երբ ՀՕ-ն կարծում է, որ Ձեր սպասարկողից լրացուցիչ տեղեկություն պահանջելը Ձեր օգտին է, ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 14 օրացուցային օրով:

Եթե ՀՕ-ն որոշում չի կայացնում արտոնության դիմումի սովորական կամ արտահերթ քննարկման համար սահմանված ժամկետներում, ՀՕ-ն պետք

է Ձեզ ծանուցագիր ուղարկի այն մասին այն մասին որ դիմումը մերժված է և որ Դուք կարող եք բողոքարկման կամ նահանգային անկողմնակալ վերաքննության հայց ներկայացնել (տես էջ 33-ը):

Դուք կարող եք ՀՕ-ից լրացուցիչ տեղեկություններ խնդրել արտոնության տրամադրման ընթացակարգի մասին: Ստուգեք գրքույկի առջևի մասը՝ պարզելու համար, թե ինչպես դիմեք տեղեկություններ ստանալու համար: Եթե Դուք համաձայն չեք արտոնության վերաբերյալ ՀՕ-ի ընդունած որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկել որոշումը կամ նահանգային անկողմնակալ վերաքննություն պահանջել (տես էջ 33-ը):

Ի՞նչ սպասարկողների ծառայություններից է օգտվում իմ ՀՕ-ն

ՀՕ-ների մեծ մասը մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ տրամադրելու համար չորս տիպի սպասարկողների ծառայություններից է օգտվում: Դրանք են՝

Անհատ սպասարկողները. հոգեբուժության մասնագետներ, օրինակ՝ բժիշկներ, որոնք պայմանագիր են կնքել Ձեր ՀՕ-ի հետ՝ իրենց ընդունարանում և/կամ որևէ այլ վայրում մասնագիտական հոգեբուժական ծառայություններ մատուցելու համար:

Սպասարկողների խմբերը. սրանք հոգեբուժության մասնագետների փոքր խմբեր են, որոնք, որպես մասնագետների խումբ, պայմանագիր են կնքել Ձեր ՀՕ-ի հետ՝ իրենց ընդունարանում և/կամ որևէ այլ վայրում մասնագիտական հոգեբուժական ծառայություններ մատուցելու համար:

Սպասարկող կազմակերպությունները. հոգեբուժական կլինիկաներ, կազմակերպություններ կամ հաստատություններ որոնք պատկանում են ՀՕ-ին կամ վարվում ՀՕ-ի կողմից, կամ որոնք պայմանագիր են կնքել Ձեր ՀՕ-ի հետ՝ իրենց մոտ և/կամ որևէ այլ վայրում մասնագիտական հոգեբուժական ծառայություններ մատուցելու համար:

Սպասարկող հիվանդանոցները. Դուք կարող եք հոգեբուժական խնամք կամ ծառայություններ ստանալ հիվանդանոցում: Դա կարող է լինել այն դեպքում, երբ Դուք շտապ օգնություն կարիք ունեք, կամ որովհետև Ձեր ՀՕ-ն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները հիվանդանոցում է տրամադրում:

Եթե Դուք նոր եք սկսել ՀՕ-ի ծառայություններից օգտվել, գրքույկի այս բաժնից հետո Դուք կգտնեք Ձեր շրջանի ՀՕ-ի սպասարկողների ամբողջական ցուցակը, տեղեկություններ այն մասին, թե որտեղ են նրանք գտնվում, ինչ տիպի մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ են տրամադրում և այլ կարգի տեղեկություններ, որոնք կօգնեն Ձեզ օգտվել նրանց ծառայություններից, այդ թվում՝ սպասարկողների կողմից տրամադրվող մշակութային և լեզվական ծառայությունները: Եթե Դուք հարցեր ունեք սպասարկողների վերաբերյալ, զանգահարեք Ձեր ՀՕ-ի անվճար հեռախոսահամարով, որը նշված է այս գրքույկի առջևի մասում:

Նշումներ

Հասցեներ համացանցում
Կալիֆոռնիա նահանգի «Medi-Cal» ծրագիր՝ http://www.dhs.ca.gov/mcs/medi-calhome
Կալիֆոռնիա նահանգի հոգեբուժական դեպարտամենտ՝ http://www.dmh.ca.gov
Կալիֆոռնիա նահանգի առողջապահական ծառայությունների դեպարտամենտ՝ http://www.dhs.ca.gov
Առողջապահական տեղեկություններ ինտերնետում՝ http://www.dhs.ca.gov/home/hsites/
ԱՄՆ առողջապահության և մարդասիրական ծառայությունների դեպարտամենտ՝ http://www.os.dhhs.gov
ԱՄՆ առողջապահության և մարդասիրական ծառայությունների դեպարտամենտի Թմրադեղերի/ոգելից խմիչքների չարաշահման և հոգեբուժության վարչություն՝ http://www.samhsa.gov